վանդ էր, բուժվում էր Մոսկվայում) գնում և մշակում էինք այն: Երբ ապաքինվեց և վերադարձավ, շատ զոհ էր մեր արածից և առաջարկեց այգու ծառուղիները կոչել մեր անուններով՝ Դամիլետի, Թեռնիկի, Վաչեի... Մենք, իհարկե, մեզ լավ զգացինք, բայց ես ասացի.

- Մենք ո՞վ ենք, որ մեր անուններով ծառուղի կոչենք, ավելի ճիշտ կլինի կոչենք Սիամանթոյի, Վարուժանի, Տերյանի անուններով: Սակայն այս գաղափարը չհասցրինք իրագործել:

Նա շատ էր սիրում հողը: Առավոտյան՝ ժամը 6-ին, 7-ին արթնա-

նում էինք, ձեղնահարկից նայում ու տեսնում, որ Պարոյրյն արդեն այգում է, ձեռքերով դիմացի լանջի մացառուտներն է հանում: Նա իսկական... դժվար է ինձ համար ասել «գյուղացի» բառը, որովհետև դա սխալ կհասկացվի: Նա մեծ քաղաքացի էր՝ որպես գյուղացի: Ո՛րքն գիտեր հողի լեզուն:

Մենք ունեցինք շատ անվանի գորուղներ, որոնց հետ խոսելը դժվար էր, բայց Պարոյրի հետ դու քեզ ազատ էիր զգում, մարդ էիր զգում, լավ էիր զգում:

Կարինե ՌԱՖԱՅԵԼՅԱՆ

ԴԻՊԿԱԾ ԵՎ ՃԱԿԱՏԱԳԻՐ

Ամիսներ առաջ Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանը լույս ընծայեց մեր ժամանակի ռուս ակադեմիկոս գրող Անդրեյ Բիտովի «Ապրելու մտադրու-

թյուն» ժողովածուն, որտեղ ներառված են հեղինակի պատմվածքներից, գրականագիտական հոդվածներից և խոհագրություններից մի քանիսը:

Ժողովածուն Զրանտ Մաթևոսյանի առաջարկությամբ թարգմանել է Անահիտ Խաչատրյանը: Ստորև ներկայացնում ենք մի հատված այդ գրքի համար Անդրեյ Բիտովի գրած նախաբանից: Ի սկզբանե նախատեսված էր, որ նախաբանը պետք է գրի Զրանտ Մաթևոսյանը:

«Ինչպե՞ս է չեն ուզում գրել այս նախաբանը... Եվ այն պատճառով, որ ինձ է ուղղված, եվ նրա համար, որ այն պատրաստվում էր գրել Զրանտ Մաթևոսյանը: Ես բարկանում եմ Զրանտի վրա. նրա մահվան լուրը դիմակայելու միակ միջոցը: Ուրեմն ի՞նչ... Ես քեզ քանի՞ նախաբան եմ գրել, իսկ դու ինձ արդեն ոչ մեկը: «Մենք ենք մեր սարերը»... խորհրդային իշխանության ղեկավար: Գիրքը Մոսկվայում ռուսերեն ավելի շուտ լույս տեսավ, քան մայրենի հայերենով: Այդպես էլ իմ որոշ գործերը սկզբում լույս են տեսել հայերեն կամ էստոներեն, ապա նոր՝ ռուսերեն: Ես քեզ համար նախաբան գրեցի 1967-ին՝ դեռ գիրքը լույս չտեսած, և իսկույն էլ հայտնվեցի Երևանում՝ քո Զարկի տակ՝ ուտեստների ոչ ռուսական առատության մեջ. «էլի՜ սուրճ»... որպեսզի հենց դրանից էլ սկսեմ «Զայաստանի դասերը», որ հետո շարունակ պիտի գրեի ու գրեի, ապա մաս հրապարակեի ու տպագրեի: Պայքարել ստիպված էի յուրաքանչյուր տողի համար: Վերջին մարտը գերմանական գրաքննության՝ Եղեմին վերաբերող «Լեռնը մեր պարտականությունն է» հրահանգի համար էր: Կես կյանք անցավ...

Դիպվածը քեզ ու ինձ Մոսկվա բերեց 1965-ին՝ հանրապետություններից եկած նույնքան էլ պատահական գործող անձանց պերսոնաժների՝ Ռեզո Գարբիաձեի, Ռուստամ Իբրահիմբեկովի կամ Վլադիմիր Մականինի հետ... Կես կյանք՝ մինչև Մոսկվան, կես կյանք՝ հետո...

Զրանտին-1973

Սարից անդին՝ ընկերն է իմ առաջին... Մոտենում է ժամը երկրորդ՝ այն վերջին: Ու կովկասյան լեռներից դե՛մ՝ նոր շոքա: Մարդիկ, տարիք, քաղաք, դիմակ, կուրծք, մոդա: Իսկ այդ շարքից հետո՞՞ գոտի մի օտար՝ Աստղեր, փառքեր, արտասահման, աղաղակ: Ու սահմանից այն կողմ՝ անդորր մի համակ. Մեկից ցուրտը, սովը, մահը, պատերազմը՝ անպատկան:

Իսկ այդ հերթից հետո արդեն հերթն է մեր՝ Բառ, բան, անկում, լռություն ու սառցալեռ: ... Մայրերը մեր՝ ա՛յ՛ հարազատ հոգիներ,

Թե հավատաս նրանց՝ իշխաններ ենք մենք գործը:

1997-ին մենք տեսնվեցինք վերջին անգամ: Երևանում ինձ մեծարեցին մեր այդ երկրորդ կես կյանքի համար: Պատվավոր պրոֆեսորի և քաղաքացու կոչում շնորհեցին, պաշտպանության նախարարն ինձ սուր նվիրեց: Եվ ի՞նչ... 2002-ի հոկտեմբերին Ֆրանկֆուրտի վերջին տոնավաճառին ես նկատեցի անկախ Զայաստանի համեստ ցուցափեղկը և, ինչ խոսք, չէի կարող չմոտենալ: Շուրջը դատարկ էր. այցելուներ չկային: Ձանձրացող երիտասարդը պոկվեց պատից: Օ՛հ, ի՞նչ մնան էր նա այսպես ասած վաթսուներկուների արտագնած կոմերտականներին՝ բալիկին, թռռնիկին, գարմիկին... Որքա՞ն վեղտ է թափվում մեր սերնդի վրա՝ վաթսուներկուների պիտակելով, մինչդեռ ահա նրանք՝ իսկականները՝ մեր բալիկները: «Քե՞ն այ հելի յու», - հարցրեց նա խորհրդային առողջապահության: Ես նրան հարցրի Զրանտ Մաթևոսյանի և Անդրեյ Բիտովի մասին: Նա ինֆորմեյշն չուներ: «Չե՞վ յու էվը հեղ օֆ դեմ»: «Նեվը», - պատասխանեց նա՝ չգիտես ինչու քամահրանքով: Օտստոյ... ինչպե՞ս կլինի հայերեն: Կես կյանք և կես կյանք... Երբ խարխափելով մտնում ես երրորդից ներս, մոռանում ես, որ երրորդ կես չի լինում, որ երրորդը լինում է միայն վերջին մի երրորդը, և ուրեմն՝ դու այդ մի երրորդի կեսն արդեն մսխել ես: Խորհրդային Միությունը պահպանվել է սոսկ ուռուցքաբանությունում՝ իբրև մեջբերում: Ես ջանում եմ չհասնել քեզ, Զրանտ... այն է՝ հիվանդությանն հետ պառկած եմ Կաշիրկայում՝ ամենավերին հարկում, վզից վեր գտնվող Գլխի բաժանմունքում, դրա հենց փակուղում, որ նայում է Կոլոմենսկոյեի: Զիմնարկությունը նախկին է, ժամանակներն են նոր: Զիվանդասենյակ վերանորոգել է ինձ նախորդած օրերով գողը, դիմացս բուժքույրերի սենյակն է՝ «Թակեք» չարածից ցուցանակով: Կողքիս՝ պրոֆեսոր, գիտությունների դոկտոր հայի առանձնասենյակն է, իսկ դրա դիմացի ոչ պակաս շքեղ, բրոնզե ցուցանակը մատնանշում է առաջատար մասնագետ, Նույնպես գիտությունների դոկտոր ադրբեջանցու առանձնասենյակը: Ռուբիկն ու Ազերն անբաժան ընկերներ են: Երբեմն մեր եռյակը միանում է փակուղում. հայկական կոնյակը, այնուամենայնիվ, ավելի լավ է, հաստատում է Ազերը: Սա ահա՛ դիպված է, թե՛ ոչ: Սա հին թե՛ նոր ժամանակն է: Երեկոյան ինձ հիվանդասենյակ զանգահարեց Էստոնիայի նախա-

գահը: Նրան համակել էր ռուսերեն խոսելու կարողախոսը: Զաշվելով հիվանդասենյակիս հեռախոսի հաշվին մնացած գումարը և զգալով, որ անհարմար կլինի ընդհատել զրույցը, ես խնդրեցի նրան զանգահարել քաղաքային հեռախոսով և թելադրեցի համարը (տուն գնալիս բաժնի վարիչն ինձ էր թողել առանձնասենյակի բանալին): Եվ ահա ես նստած եմ բազմաթիվ դիպլոմներով զարդարված ուրիշի առանձնասենյակի կաշվե բազմոցին և զրուցում եմ Էստոնիայի հետ: «Այս ի՞նչ համար եք ինձ տվել», - հետաքրքրվում է նախագահը: Ես բացատրում եմ, որ նրստած եմ բաժնի վարիչի առանձնասենյակում: «Օ՛, ճիշտ ու ճիշտ՝ ինչպես Խորհրդային Միությունում», - և դիվանագետի սարկազմը հալվում է էստոնացու անկեղծ, երջանիկ ծիծաղում: Ո՛չ, դիպված չէ: Եվ սխալ չկա: Պատմության մեջ այն չի լինում: Տխուր է միայն, երբ պատմությունը համընկնում է ծերության հետ: Գնում եմ ես հարազատ Պիտերում մետրոյով և սկսում անհանգիստ շարժվել տեղումս ինչ-որ մեկի համառ հայացքից: Տարեց մի հայ խանդաղատանքով ինձ է նայում: Ես սկսում եմ փքվել համեստությունից՝ ճանաչում եմ, գնահատում: Միայն՝ չեմ հիշում, թե ո՞վ է: Որտեղ եմ տեսել նրան: «Ի՞նչ է, չե՞ս ճանաչում», - վերջապես հարցրեց նա: Եվ ձայնից ես միանգամից ճանաչեցի: Իսկ ես Զրանտին իմ առաջին հայն էի կարծում... Իմ առջև կանգնած էր Վալերի Գրիգորյանը՝ 1944 թվի մոլոչի իմ առաջին բարեկամը: Առաջինը և միակը ողջ կյանքում: Միայն թե՛ կես դար չէինք տեսնվել: Եակատազիրը հենց այն է, որ ի հայտ է գալիս դիպվածից:

12 մայիսի 2003թ.

Վերջին 30 տարիներին նկատվում է ջերմաստիճանի բարձրացման կայուն միտում: Երկրագնդի համընդհանուր տաքացմանը նպաստում են գործող հրաբուխներից առաջացած գոլորշիները, մանր մասնիկները: ՆԱՍԱ-ի գիտնականները հայտնել են, որ 2005թ. կարող է դառնալ ամենատաք տարին Երկիր մոլորակի միջին տարեկան ջերմաստիճանի պատմության մեջ:

«ՀՐԱՆՏԻ ԾԱՂԻԿՆԵՐԸ ՀՐԱՆՏԻՆ». Ի ՎԵՐՈՒՄՏ ՆԵՐՇՆՉՎԱԾ ԲԱՐՈՒԹՅԱՄԲ



«Ձիապանը սարերի միակ մարդն էր, որ զգում էր իր հայությունը: Մյուսները գիտեին, որ իրենք գառնարած, հորթարած են, հնձվոր, կթվոր, խուզվոր են, որ ցրտերի հետ իջնելու են ձորը՝ Ծմակուտ, շոգի առջևից զովի հետ դուրս են գալու սարերը: Ձիապանին այդքանը քիչ էր թվում...»:

Հրանտ Մաթևոսյանի «Մեսրոպը» վիպակը առանձնանում էր իմ սերնդի համար, մեր ջահել հասակին գումարում չարի ու բարու երկընտրանքի անհնարիմության փորձ ու կենսագրություն:

Մեր ժամանակակիցն էր Հրանտ Մաթևոսյանը: Այս փետրվարին նրա 70-ամյա հոբելյանական տարեդարձին, «Հրանտի ծաղիկները Հրանտին» խորագրով Նկարչի տանը բացված ցուցահանդեսում ենք գտնում մեզ, մեր լեռնաշխարհի արևի ու գույների մեջ Հրանտ Թադևոսյանի ստեղծած տեսլական աշխարհում:

«Այո, չարը չար բան է անում, բարին բարիք է գործում»: այս համոզումն ունի նաև գեղանկարիչը:

- Ի վերուստ է տրվում արվեստի ու գեղեցիկի զգացողությունը մարդուն, ամենքին ներարկվում է անբացատրելի, առանձնահատուկ մի վե-

րաբերմունք բնության, մեն-մի ծաղկի հանդեպ, որ պայքարով է կյանք առնում, անգամ՝ քարը ճեղքելով: Միայն թե բնաստեղծ կյանքից մենք արդեն հեռանում ենք: Բարձրահարկ շենքերի բնակարաններում որքան էլ հեռուստացույցով էկզոտիկ բնություն տեսնենք և ծաղիկներով զարդարենք մեր շուրջը, միևնույն է, ապրելիք օրը անկենդան կլինի: Մինչդեռ ես ուշադրություն եմ դարձրել, մտածող մարդու համար բնության երևույթներով անընդհատ զարմանալու հրաշքը գործում է:

Գրող Հրանտ Մաթևոսյանը մտածող հայի փիլիսոփայությամբ է մեզ համար վերլուծել կյանքն ու աշխարհը: Շատ նոր բառեր պետք չէին ասելիքն արտահայտելու համար: Մարդկանց կենցաղային խոսակցությունների մեջ է ծնվում խոր իմաստությունը, որ վերջը պիտի բարի լինի:

Գարնան գալուն ենք սպասում, որ ծաղկի մեր ծիրանենին, բայց լինում է և այնպես, որ ծաղկունին հաջորդում են ցուրտ ու սառնամանիք, անբացատրելի հակասականը հանկարծահաս է կյանքում: Մաթևոսյանական գրական կերպարներից դուք Մեսրոպին եք առանձնացնում՝



«Ձիապանը սարերի միակ մարդն էր, որ զգում էր իր հայությունը»: Եթե գեղանկարչությամբ դատենք՝ հայ նկարիչ

լինելու համար Մասիս սար կամ ծիրանենի նկարել պետք չէ: Հայ արվեստագետը տարբերվում է մայր արևի տակ մեր լեռների գույների իր զգացողությամբ, իր կենսափիլիսոփայությամբ:


Այս զգացողությամբ և կենսափիլիսոփայությամբ է ստեղծել իր կտավները Հրանտ Թադևոսյանը, որտեղ արվեստաբան Ռաֆայել Մարտիրոսյանի խոսքերով, «ջնջված են իրականի ու երևակայականի աղբյուրները, և մեր հիացքի մեջ զնգում, շնկչնկում, բուրում են ահ-



նիծորյան-հայաստանյան ծաղիկները՝ այսքան գեղեցիկ, այսչափ լուսեղեն, այսկերպ անքուր ու ծփծփուն ելևէջներով...»:

Ձրույցս Հրանտ Թադևոսյանի հետ դեռ շարունակվում էր, սրահում այցելուներն էին և ես՝ հայացքս գեղանկարչի վրձնած աշխարհին, ով ժամանակակիցն է Հրանտ Մաթևոսյանի, ում համար 20 և 21-րդ դարերի սահմանագիծը հատող հայ մարդու ճակատագիրն ու գալիքը իմաստավորված են ի վերուստ ներշնչված բարու հավատով:

Սանիկ ԱՃԵՄՅԱՆ



ՏԵՐ ԿԱՆԳՆԵՑԻ...

Այդպես չհասկացված, այդպես թույլ, այդպես անհավասար՝ նա երկու հազար հինգ հարյուր տարվա մշուշից ընդառաջ ելավ, և ես տեսա ինձ: Եվ իմ անզորությանը, փափուկ դանակին ու փուխր բազուկին տեր կանգնեցի:

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

...Մեզմից ամեն մեկն ունի իր Հրանտ Մաթևոսյանը ու նաև նա է, որ մեզ բոլորիս՝ բոլոր հայերիս դարձնում է ամբողջություն, դարձնում է ազգ ու մեր բնակավայրը՝ մեզնով ու իրենով Հայրենիք:

... Մեզմից ամեն մեկն ունի իր Հրանտ Մաթևոսյանը, և մտքում երբեմն էլ կարծում է, որ եթե ինքը ժամանակ ունենար, հնարավորություն ունենար, կարող էր նրա նման գրել: Իսկ ինչո՞ւ ոչ: Ի՞նչն է դժվար... Նստում ես ու հիշում ես մանկությունդ՝ դառնում է «Կանաչ դաշտ», «Մեր վագրը», «Բեռնածիփեր», նստում ես ու հիշում ես համազուլղացիներիդ, դառնում է «Ահիճոր», «Մենք ենք, մեր սարերը», «Գոմեշը», «Բաց երկնքի տակ հին լեռներ», հիշում ես ծնողներիդ, դառնում է «Աշման արև», «Ծառերը», երիտասարդությունդ ես հիշում, դառնում է «Խումհար», մի քիչ էլ մտածում ես, դառնում է «Մեծամոր», «Տաշքենդ» ու «Տերը»...

... Մեզմից ամեն մեկն ունի իր Հրանտ Մաթևոսյանը, ում հետ

խորհրդի է նստում դժվար պահին, ում հետ իր կռիվն է կռվում անհաշտ պահին, ում հետ ճանապարհ է անցնում՝ ինքն իրեն հասկանալու, ում հետ սովորում է սիրել ու սովորում է ատել, ում հետ սովորում է հիշել ու սովորում է հավատարիմ մնալ հիշողությանը, ում հետ մի քիչ Իշխան է, մի քիչ Ավետիք է, մի քիչ Աղուն ու մի քիչ...

Պարզապես մեզմից ամեն մեկը ինքն իրեն սիրում է երևակայել Հրանտ Մաթևոսյանի պատմվածքներից ու վիպակներից ծնված հերոս, որովհետև այդ հերոսների միջով անցել է պատմությունը ու այդ հերոսներին կյանքից գրականություն տանելով՝ գրականությունից վերադարձրել է կյանք: Համարյա անխաթար, ուղղակի մի քիչ ծերացած, մի քիչ ուրիշ, մի քիչ...

Ոչ: Այդպես չէ: Իրականում բոլորովին էլ այդպես չէ: Իրականում մենք ուրացել ենք նրանց, ովքեր մեզ բերում են ճշմարտության խոսքը, մենք ուրացել ենք նրանց ու նրանց ճշմարտությունը

գերադասում ենք կամ չենք կատարել, կամ չհասկանալ, որովհետև այդպես հեշտ է ապրել: Այդպես հեշտ է նրանց ուրանալ...

Իրականում մենք հեռացել ենք դեպի տաճար տանող նրանց բացած ճանապարհից, և դա բոլորովին էլ նրանց մեղքը չէ, այլ մեր, որ օրվա գնահատականը գերադասում ենք ժամանակի գնահատականից, օրվա մեջ ծնվող ու մեռնող մեր ժողովարարներով, օրվա մեջ ծնվող ու մեռնող մեր հերոսներով, օրվա մեջ ծնվող ու մեռնող մեր վճիռներով, օրվա մեջ ծնվող ու մեռնող մեր գրականությամբ:

Իրականում մենք դադարել ենք հաղթել, որովհետև հորիզոնի մեր գիծը դարձել է անցյալի ինչ-որ պատկերի վերագտնումի ճիգ: Ընդամենը: Եվ դա արդեն դատավճիռ է:

Իրականում նա մեզ սովորեցնում էր իշխան լինելով՝ Ավետիք մնալ, որովհետև ուժը պիտի հոգի ունենա, սովորեցնում էր պարտությունների միջով դեպի հաղթանակ գնալիս՝ եղբորը չուրանալ, Վարդան Մամիկոնյանին միայն դարերի խորքում չտեսնել, նա մեզ սովորեցնում էր հայ լինել ու հայ մնալ ու հայ պապերի հայ ժառանգների միջև կապող օղակի մեր դերը չձախաղել:

...Լավ գիր է, գեղեցիկ, էսպես ինքն իր համար: Ոչ ոքի ոչինչ չի հրամայում: Մեզվից ուրիշի ոչ մի պարտադրանք չի տանում: Ինքն իր համար կա ներամոտիվ, խոհուն և իր խորին եզրահանգումն ինքն իր մեջ մեռցնող: Սա Հայոց գիրն է և միայն Հայոց գիրն է: Մեր մասին ու մեզ համար ճիշտ գիր է:

...Գիտե՞ս ինչ, կյանք է՝ և մի ակնկալիչ անփոքորիկ ծով. և եթե խորտակվում ես՝ մեղքը քոնն է և ոչ թե փոքորիկնը, քանի որ փոքորիկը ծովն է: Ո՛ր է խարխալը: Խարխալը...

...Նա կերկրպագի հայերից մաքրված տարածությունների ամայի հզորությունը և առնական կորով կցանկանա թուրք յուրաքանչյուր տղամարդու մեջքի՝ այդ ամայությունը լցնելու թուրք մանչուկներով: Եվ նոր միայն... և նոր միայն իր հայրենիքի դիվանագետներին նա կհուշի խոսք բացել հայերին պատճառված

վնասի մասին և վեհանձնաբար հանձն առնել վնասի հատուցումը՝ մի երկու կամ մի երկու հազար ոսկի, թող գնան ձեռները կտրեն: Միայն թե... Թուրքիան ո՛ւն է հատուցելու վնասը՝ դաշնակցականների՞ն, ռամկավարների՞ն, հնչակյանների՞ն, ընդհանուր բարեգործականի՞ն, Էջմիածնի կաթողիկոսարանի՞ն: Անթիլիասի կաթողիկոսարանի՞ն, համայնավարների՞ն, թե՞ Միավորված կազմերի կազմակերպությանը: Թող հայերն իրենց մեջ վճռեն այդ խնդիրը՝ Թուրքիան պատրաստ է վեհանձնաբար հատուցելու իր պատճառած վնասը, որ այնքան էլ ինքը չէր պատճառել, այլ դժբախտ հանգամանքները, և հանգամանքների դժբախտացմանը նպաստել էր իրենց հայերի վարքը:

...Այս այսպես է ու կմնա այսպես, քանի դեռ բետոնը տասը կանգուն չերտով մինչև վերջին թիզը չի ծանրացել այս ցնորական երկրի կավին: Եվ ինձ վրա: Եվ ձեզ վրա:

Եվ ամենազարմանալիկն. դարձյալ կանաչեցին արտեր, արտի ու հովի խաղ եղավ, դարձյալ կակաչը կարմիր էր և զանգակ ծիծաղ կար մեր կանաչ մարգերի վրա: Եվ Վարպետը մտեց գահին և խորհեց գարիուրելի դաժան ու անդիստամարտերն այլևս տանուլ տրված չեն լինելու ու նրա մարգարեները հերքելու են «Մարգարեն հայրենիքում տեղ չունի» օտարների հնարած ասույթը:

...Ինչո՞ւ ես տխուր և ինչո՞ւ ես ուրախ:

Հետո՞: Ոչինչ: Խոսքի ոսկին մոխրից ու տիղմից չի խուճանում: Գալու է թուխ ու ջղային մարդկանց նոր ցեղ, որ իրեն հայ ու իր երկիրը Հայք է կոչում... Եվ նրա ճակատամարտերն այլևս տանուլ տրված չեն լինելու ու նրա մարգարեները հերքելու են «Մարգարեն հայրենիքում տեղ չունի» օտարների հնարած ասույթը:

Հետո՞: Հետո իրականում մեզվից ամեն մեկը կունենա իր Հրանտ Մաթևոսյանը և Հրանտ Մաթևոսյանն ու իր ստեղծագործությունը մեզ բոլորիս՝ բոլոր հայերիս կործանելու մեղ մարդու-ջուրջուն, ու մեր բնակավայրը՝ մեզնով ու իրենով Հայրենիք:

ԱՆՏԻՍՏԱՆ ԱՂԱՍՅԱԼ


ԲՈՆԱԿԱԼՆԵՐԻ ԾՔԵՐԹ

Ամերիկյան Parade հեղինակավոր ամսագիրը հրապարակեց մոլորակի գլխավոր բռնակալների ամենամյա ցուցակը: Պարբերականի գլխավոր խմբագիր Դեվիդ Վալեյնսկին կազմել է ցուցակը Freedom House, Amnesty International, Human Rights Watch և «Լրագրողներ առանց սահմանների» միջազգային անկախ իրավապաշտպան կազմակերպությունների հետ խորհրդակցությունների և զեկուցագրերի տեսական մշակումից հետո: **1. ՍՈՒՂԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՕՍՄԱՐ ԱԼ ԲԱՇՆԱՐ:** Կարկանդակի առաջին հորիզոնականի համար նա պարտական է Դարձուր նահանգում ծավալված իրադարձություններին, որոնք համաշխարհային հանրությունն անվանեց ցեղասպանություն: Անցած տարվա ողջ ընթացքում արաբական «Ջամախալիդ» կամավորական զորքի գրոհայինները Սուդանի ազգային-ազատագրական բանակի հետ միասին ոչնչացնում կամ բռնի արաբականացնում էին իսլամ չդրված սևամորթ ցեղերի ներկայացուցիչներին: **2. ԿԻՄ ՉԵՆ ԻՐ:** «Միրելի Դեկավարը, Չուչխեական Զեղափոխության Ամսա Գործի Մեծն Շարունակողը» 1994 թվականին ժառանգեց իշխանությունը հորից՝ «Մեծն Առաջնորդ, Ազգի Արև, Զգոր Հանրապետության Մարշալ, որը շարունակում է ապրել մահից հետո և կապրի, քանի դեռ գոյություն ունի ԿԺԴ-ն», Կիմ Իր Սեմից: **3. ՓԵՆԵՐԱԼ ՏԱՆ ԾՎԵ: ՄՅԱԼՍԱԿՅԻ ՈՎՋՍԱԿԱՆ ԽՈՒՆՏԱԿՅԻ ԱՈՎՋՆՈՐԴ:** Հաշվեհարդար տեսակ ընդդիմության հետ, տնային կալանքի ենթարկեց խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր Աուն Սան Սու Չժիին: Ընդդիմության միջոցառումներին մասնակից երիտասարդներին հրամայեց ուղարկել ռազմաճակատ՝ ապստամբների դեմ կռվող զորամասեր:

4. ԶԺՀ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՒ ՅՁԻՆՏԱՈՒ: Այս մարդը 38 տարի շարունակ մազլցում էր Չինաստանի կոմկուսի հիերարխիական աստիճաններով և 2002 թվականին գլխավորեց վարչակարգը, որը, իրավապաշտպանների կարծիքով, մնում է աշխարհում ամենաբռնապետականներից մեկը՝ չնայած տնտեսության լիբերալացմանը: Կուսակցությունը վերահսկում է ՋԼՄ-ներին և պահում 30 հազար զործակալ, որոնք հետևում են ինտերնետից օգտվողներին: 300 հազար չինացիներ «վերադաստիարակվում» են աշխատանքային գաղութներում: **5. ՍԱՌԴՅԱՆ ԱՐԱՐԻՍԻ ԹԱՎԱԹԱՆԱԿ ԱՐՔԱՅԱՆ ԱՐԿԱԼԼԱ:** 1995 թվականից ի վեր նա պետության իրական ղեկավարն է: Երկրի ողջ իշխանությունը թագավորական ընտանիքի ձեռքին է, իսկ օրենքները հիմնված են Դուրանի վրա: Իսլամի իրավական նորմերի խախտումը հաճախ պատժվում է գլխատուճով, չնչին զանցանքները սպանվածուճով: **6. ԼԻԲԻՎԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՈՎՋՆՈՐԴ ՕՒՄԱՍԱՐ ԿԱՂՏԱՆ:** 80-ական թվականներին նա «արյունարբու մագործի», «միջազգային ահաբեկչության հովանավորի», «թիվ 1 հանցագործի և ահաբեկչի», «կատաղած

չան» համբավ ուներ (վերջին բնորոշումը պատկանում է Ռոմալո Ռեյ-գանին): Վերջերս Կադաֆին հայտարարեց, որ զղջում է, խոստացավ 10-ական միլիոն դոլար փոխհատուցում վճարել Լոքերբիի ահաբեկչական գործողության ժամանակ զոհվածների հարազատներին, հայտարարեց զանգվածային ոչնչացման գեներալ մշակումից հրաժարվելու մասին և թույլ տվեց միջազգային դիտորդներին այցելել լիբիական ռազմական գործարաններ: **7. ՊԱԿԻՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՎԵՋ ՍՈՒՆԱՐԱՆ:** Աֆղանական գործողությունների ժամանակ ամերիկացիներն աչք փակեցին այն բանի վրա, որ իրենց հետ ակտիվորեն համագործակցող գեներալը իշխանության եկավ ռազմական հեղաշրջման ճանապարհով, տապալելով օրինակամորթ ընտանիք կառավարությանը, և որ նախկինում նա կապված է եղել թախիբների ու ահաբեկչական այլ խմբավորումների հետ: **8. ԹՈՒՐԵՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՓԱՐՍՈՒՐԱՆ ՆԻՅԱՉՈՎ:** Ակբար (Մեծ), Սերդար (Առաջնորդ), Թուրքմենբաշի (Բոլոր թուրքմենների առաջնորդ), թուրքմեն մայրերից լավագույնի՝ Դուրբանսուլթան-Էջեի որդի, Թուրքմենստանի հնգակի հերոս, «Ալտին այ» («Ոսկե կիսալուսին») մեղալի և «Ալտին ասիր» («Ոսկեդար») շքանշանի միանգամից երեք աստիճանների ասպետ, «Ռուհիբիլենթ» («Բարձր ոգի») շքանշանի առաջին և միակ ասպետ, որը շնորհվում է «քաղաքացիների հոգեկան բարձր դաստիարակության գործում ունեցած առանձնակի վաստակի համար»: **9. ԶԻՄԲԱԲԿԵԻ ՆԱԽԱԳԱՀ ՈՐԲԵՐՏ ՍՈՒՀԱԲԵ:** Human Rights Forum-ի տվյալներով, նրա կառավարման տարիներին երկրում սպանվել է 70 հազար մարդ: Երբ 2002 թվականի նախագահական ընտրությունների ժամանակ Մուհաբեի դիրքերը թուլացան, նա խաղաղեց ռասայական հաղթաթուրքը՝ վավերացնելով սպիտակամորթ ֆերմերների «կուլակաթափությունը» անկախության պատերազմի սևամորթ վետերանների կողմից: Որից հետո հայտարարեց. «Չիմքաբվեց միայն սևամորթների համար է»: **10. ՀԱՍԱՐԱԿԱՇԱՅԻՆ ԳՎԻՆԵԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ (ԹԵՈՂՈՐՈ) ՕԲԻԱԿ ԵԳԵՍԱ ՄԲԱՍՈՐՈ:** ԱՄՆ նավթային ընկերությունները միլիարդավոր դոլարներ են ներդրել այս երկրում, սակայն նավթի վաճառքից գոյացած եկամուտները հոսեցին անմիջականորեն նախագահի Մթասոհի գրասենյակ: Բոլոր կշտամբանքներին նա պատասխանեց այսպես. «Գլխեցայում աղբատություն չկա, պարզապես մարդիկ այստեղ այլ կերպ են ապրում»: Անցած տարվա ամռանը պետական ռադիոյով (երկրում ոչ մի թերթ լույս չի տեսնում) ազդարարեցին, որ «նախագահը աստվածակերպ է, նա հաճախ տեսակցում է Բարձրյալի հետ, կարող է իրամայել սպանել ցանկա-ցածին»:

Պատրաստեց Կարեն ՆԱՀԱՊԵՏՅԱՆԸ



Հարցուփորձ

(Հարցերը - ենթավերնագրերի տեսքով - Տիգրան Պասկևիչյանի, փորձը՝ Ավագ Եփրեմյանի)

Մտածել, թե՛ չմտածել էս աշխարհի ու նրա ապագայի մասին: Մտածել, թե՛ չմտածել առհասարակ: Մտածել և բանական լինել: Ու՞ր՞ն բանն են: Օրինակ, ես մտածում եմ (միտք եմ ածում, միտք եմ թափում-թափթփում, մտքաթափ եմ լինում)՝ մարդուն, առհասարակ մարդուն, կարելի՞ է համարել բանական արարած: Բացատրությունը (ի դեպ, ոչ միայն այս հարցի) կարելի է գտնել մեր լեզվի՝ Հայոց Լեզվի մեջ: Բանական: Միայն մեր լեզվում է պարզ, որ Բանը Լոզոսն է: Բանականը հատկապես Լոզոս-ականն է: Եվ ոչ, ասե՛նք, կուսակց-ականը... Առավել և՛ ականը (արկը)՝ առանձին կամ՝ ականական-արկականը:

Բայց մտածելն էլ քիչ չի: Մարդը, երևի, մտածելով է տարբերվում ... մյուս մարդուց, իսկ տարբերվել պետք է, որովհետև եթե տարբեր չես, էլ ինչու՞ ես:

ՄՍԱԾԵԼՈՒ ԲԱՆ Է:

Ուրեմն էս աշխարհի ու նրա ապագայի մասին ահա թե ինչ եմ մտածում. երբեք էսքան մեռած մարդ չի եղել աշխարհիս երեսին (երեսը ուզում եմ շեշտել, այսինքն՝ հասկանալի անել, որ Տակը նկատի չունեմ, Տակի հետ գործ չունեմ առայժմ): Իսկ նրա - էս աշխարհի - ապագայում մեռածներն ավելի շատ են: Եղ եռանդոտաբեղ վագրին մի մայիր, կամ հենց էդ խեղաեռանդ վագրից գլխի ընկիր, որ մեռած եմ, էդ վագրը փուչ է, էդ եռանդի մեջը՝ ամայք, էդ ամայքից են ուզում փախչել՝ փուչ վագրով: Բայց դրանից վագրելով չես փախչի, էդպիսի Կարգ չկա ... Մնա, որ ցցես էդ ամայքը: Փախչելը կենդանության մշան չի: Կամ՝ ընդամենը մշան է (կենդանակա՞ն):

Հայի ու քուրքի մասին

Կախվածությունների տիեզերքն է մեր ունեցածը, ուրիշը չունենք: Կախված ենք (լսվում է «մեզ կախել են»-ը, չէ՞, ոնց որ ... դե, ծայրը կա ուրեմն, որ լսվում է: մեզ կախ-կախ են արել): Երկրագունդը կախված է օդից, մարդը կախված է մագից և էպպե շարունակ: Մարդը իր չինացության, իր հպարտության, իր շատ ու շատ «ուրյունների» մագից է կախված: Եղ «ուրյունները» հենց մագ են, որ կան: Հագիվ էլ մագ լինեն:

Իսկ հայն ու քուրքը իրար համար են: «Ի՞նչն է առավել իրական Տաճկաստանի հայկական հողե՞րը, թե՛ Հայաստանի տաճկական վարքուբարքը»: Ես չգիտեմ, թե Լեռան մյուս կողմում ի՞նչ են մտածում սրա մասին, բայց հայն ու քուրքը իրենց մտածություններից պիտի մեծահոգաբար հրաժարվեն, պիտի հստակեցնեն իրենց տարբերությունները, որ կռիվ չունենան միմյանց հետ, բաժանելու բան չունենան: Տարբերությունները հստակեցվում են միմյանց ԿԵՆՍԱԿԵՐՊՈՎ, ուրիշ ճանապարհ գոյություն չունի: Ես միտքը չեմ բացում, որովհետև կռիվ բուն է:

Ի՞նչ կլինի, եթե հանկարծ որոշեն («տերերից» ո՞վ գլուխ կհանի) ու ինչ-որ ճանապարհահատվածի, ինչ-որ տարածքի դիմաց Մասիսը տան են կողմին: Ի՞նչ պիտի. տղերքը, իրար հեթե՞ չտալով, կսկսեն «օբյեկտներ», խաղատներ ու հյուրանոցներ կառուցել ստորոտին, լանջերին, գագաթին ... «խաղողի որթ», «Քամ և եղբայրներ», «Սեմ հողիճիգ»... Բիբլիական խորովածի ծուխը կբռնի երկինքը ... Կկրակեն ու կտաքաման ... և այլն: Եղ չի ցավ, այլ էն, թե ոնց են մեր «ազատները» այդ առթիվ դասեր տալու «ավանդապահներին»: Երևի էսպես. իսկ ո՞վ ա ասում, թե խորովածը սուրբ չի, հին մարդիկ եք, ժամանակ կզգա ու հենց ինչ տեղը կդնի, կվարժվեք և այլն:

Ժամանակի մասին տես հաջորդ ենթավերնագրի տակ: Մնացին հինգ ու վարժվելը:

(Ազատության ու ավանդապահության մասին՝ մեկ ուրիշ անգամ, առանձին: Դրան արժանի են):

«Մտածող մարդու» համար «հինը» հունականն ու հռոմեականը չեն: Թե՛ շուներականը: Հինականն ու հնդկականն էլ չեն ասում: Ես պարզ թվարկումը չի՞՞ հուշում, որ ՄԱՐԴԸ վաղուց երեսխա չի, ՎԱՐԺ է: Ել ու՞ր վարժվի: Ինչի՞ն. մեծագույթա՞նը, դավի՞ն, չարությա՞նը: Սրանց են գլխից վարժ է: Անտեր (անտե) սե՞քսը ... Ի սեր Աստոծ, անհիշելի՞ ժամանակներից, մշակութային մակարդակով: Վարժված ունի. անգլերենի կառույցն է, հա՞, սկսել է ավելի պի՞ն՞թ թվալ: Չէ, հենց էլ անգլերեն չի, մեր հայտնի ուշուցներից մեկը հենց էդ ձևով չի՞՞ կառուցված ... «Բոլորի Հոլիվուդը»՝ «իր ապրելակերպով» ինչքա՞ն հաց ու պանիր պիտի ուտի, որ հասնի Ողիմպոսի վարքուբարքին: Առաջինը երկրորդի ճկույթն էլ չարժի: Դուք չեք սխալվում, են նկատի ունեն Ձևի, Հերայի, Ափրոդիտի, Ապոլոնի ու մյուսների Ողիմպոսը: Ուրե՞մն: Ուրեմն՝ վարժվելու մասին չխոսես: Եթե խնդիր կա՝ ետ (կամ՝ հետ) վարժվելն է խնդիրը (ի՞նչ կասես «ապավարժվելու» վերաբերյալ):

Հեռացա՞նք, թե՛ մոտեցանք:

Ի՞նչ իմանամ, ես, իհարկե, հայի ու քուրքի մասին եմ խոսում: Նաև՝ Լեռանն արժանանալու:

Առաջվա ու հիմնիկվա մասին

Այսինքն՝ ժամանակի: Նա է միայն, որ առաջ ու հիմնիկ ունի, կամ մենք ենք կարծում, թե ունի: Զգացողության հարց է: Ես դեպքում, կարծում եմ, ֆիզիկական մակարդակի զգացողության: Մենք զգում ենք նյութական, «սառած» ժամանակը (երևույթը, ոչ ամբողջականորեն, կարելի է ներկայացնել մոտավորապես տիեզերանավի օրինակով. անցնում է սրընթաց ու շեկ՝ թողնելով վառված ու սառած «թափոններ»՝ առաջին, երկրորդ և այլ սատիճանների տամող հրթիռներ, որոնք իր՝ բուն տիեզերանավի տեսակետից այլևս անպետք են), որը տարածությունն է (չարյաց փոքրագույնը կլինի «մաքուր տարածությունը», սակայն, ցավոք, նման բան չկա. տարածությունը առկա է որպես «տարածքներ», որոնք բաժանված-սեփականված են): Հրեշտակները ժամանակը չեն «զգում», չէ՞, կամ զգում են ամբողջ ժամանակը միանգամից, ավելի ստույգ՝ չեն զգում ժամանակի՝ մեր ասած «հոսքը»: Այ, էդ հոսքը չզգալով՝ կարելի կլինի չզգալ նաև ցավը, տառապանքը, նվաստացումը և այլն: Մենք մարդ ենք: Դա լավ է (ճարներս ինչ), իհարկե, բայց որպես մարդ էլ, կարծում եմ, ճիշտ չենք պատկերացնում ժամանակը: Մենք մեզ փորձում ենք համոզել, թե ինչ-որ ժամանակներ են գալիս, կամ՝ գալու են: Մինչդեռ ժամանակը մի բան կարող է անել - անցնել: Դա ժամանակի իրական գործողությունը ցույց տվող միակ բայն է լեզվում: Իսկ լեզուն լավ գիտի, որ ժամանակը Որոշակի բան է, առավել որոշակի քանակությամբ. մի Տեղից սկիզբ է առել, մի Տեղ էլ պիտի վերջանա, անցնի-գնա: Էնպես որ, ոչ մի ժամանակ էլ չի գալիս, ժամանակն անցնում է, ընդ որում՝ բավական արագ: Իմիջիայլոց, սա նաև մեր միակ միփաբարությունն է, որովհետև ժամանակն անցնում է, ինչպես ցավը, չարչարանքը, ատելությունը և այլն, այսինքն՝ ինչպես կյանքը:

Չմեռվա ու ամառվա մասին

«Երջանիկը» բանաստեղծության մեջ Միլոշը մասնավորապես նկատում է, որ իր հերոսի ապրած տարիներին հստակացել էին նույնիսկ ասանաները տարվա եղանակների միջև: Մեր ապրած տարիների ամառն ու ձմեռը տեսքնություն կբռնեն: Հստակ պիտի լինեն, հստակ: Բայց մեզ լսողն ո՞վ է:

Ես-ի ու եսիմ-ի մասին

Աստված արարեց իմ ԵՄ-ին, իմ ԵՄ-ն արարեց իմ ԵՄԻՄ-ին՝ ԵՄ-ից ու ԻՄ-ից, հասուն տարիքում:

Կամ՝ թե ինչպես ես իմ մեծամտության շնորհիվ համեստաբար ջարդուփշուր արեցի նույն իմ մեծամտության քիթը: Որոշակի մի տարիքում ինձ սկսեց թվալ, թե իմ «առաքելությունն» էս երկրի վրա «ճշմարտությունն իմանալն» է: Ընդ որում՝ ես դա որքան հնարավոր է շուտ պիտի իմանայի, որպեսզի հասցնեմ, չուշանամ, պատրաստ լինեմ, որովհետև զուգահեռաբար ինձ թվում էր նաև, որ մի օր, սխալներից հոգմած, մարդիկ գալու են, որ հարցնեն ... Ո՞նց չիմանայի, ամոթ էր: Եվ «սկսեցի իմանալ»: Շատ իմացա, թե քիչ, շատն ու քիչը Աստված գիտի ... Ուշացումով, բայց հասկացա կարևոր բաներից մեկը. հարցնող չի լինելու, որովհետև չի լինում, որովհետև եթե մի տեղ իմացություն կա, ապա մարդկանց հեռուներում փնտրիր, իսկ եթե մարդը կա՝ ավելորդ իմացությունն է:

Բայց իմացություն իսկապես գոյություն ունի: Ժողովրդավար Պլատոնի՝ ժողովրդավար Սոկրատեսին վերագրած չարածի կատակը, անվերջ մեջբերողների որոշակի մեծություն շնորհիվ, իսկապես կարող է աշխատել (աշխատում էլ է) հօգուտ ժողովրդավարության վերջնական հաղթանակի, որ է՝ ճշմարտության վերջնական պարտակումը: Այդու, ինձ ավելի հարազատ է Բրոդսկու միտքը: Իր ուսանողներից ասում էր. «Ես էլ ոչինչ գիտեմ, դուք էլ ոչինչ գիտեք, բայց իմ ոչինչը ձերինից շատ է»:

Ինչե՞կ՝ ես փոխարինել եմ եսիմով: Լավ է, մերձ է խաղաղությանը: Իսկ իմացությունը խաղաղության մեջ է գոյական: Էլի իմ էշն եմ քշում ... Նույն մեծամիտն եմ, հա՞, երևի: Բա մարդուց ուրիշ ի՞նչ էիր սպասում:

Արջի ու նրա իմացած յոթ երգի մասին

Ինձ դուր է գալիս նաև ուղտի մասին ասվածը. «Ընչի՞ է շլինքը ծուռ - Իբր ի՞նչս է դուզ»: Խո՞զն է հետաքրքրական. աստվածաշնչյան մարգա-

րիտներն առաջն ածած և իր մյուս պատկերին զուգահեռ. «մարդուն որ շատ խոզ-խոզ անես, ի վերջո խոզ կդառնա»... Տեսնես ո՞վ է եղբան մարդուն «խոզ-խոզ արել»։ Բայց ես պահին մտքիս մեջ է ձի-կյանքը՝ Բորոսկու ներկայացմամբ։ Ասում է՝ դու կյանքի - ոնց որ նվեր ստացած ձիու - երախը չես ուզում զննել, իսկ ինքը, արի ու տես, ամեն հանդիպելիս սեպերն (այսինքն՝ ակռաներն) է բացում։

Չարենցի ու Թաթա Սիմոնյանի, կամ ոչ Չարենցի, ոչ էլ Թաթա Սիմոնյանի ու նման փարափեսակ բաների մասին

Թաթա Սիմոնյանին չեն ճանաչում։ Բայց Թաթա Սիմոնյանի երգերը անգիր գիտեն։ Որովհետև Կապանից երևան են գալիս (երևան գալը ցանկալի՞ է, թե՞ պարտադիր) բացառապես «Միցուբիշի»-ով, որովհետև դա համեմատաբար էժան փոխադրամիջոցն է։ Տեղավորվելուց մի տասրտասնհինգ րոպե հետո Թաթան սկսում է։ Սկզբում՝ ցածրաձայն։ Սկիզբն էլ որ ասում են՝ մի քանի վայրկյան է տևում։ Հետևի նստարանից մեկը (զուրգե դա միշտ նույն մարդն է, չգիտեմ) անմիջապես հրահանգում է. «Ախպեր, թո պեցուր մի» (թո=թող, պեցուր=բարձր, ընդ որում՝ ու-ն պիտի արտասանել Սոլաու-ով, ծայնադարձով՝ այսինքն, իսկ մի=լիմի)։ Ու գնա՛ց. հինգ և ավելի ժամ տևող ճամփորդություն է։ Չուզես լսել՝ երևան չես գնա։ Իսկը՝ սոցիալական քարտ։

Ի դեպ՝ ստանում ես, չէ՞, թե ինչեր են անում։ Իսկ էնտեղ, որտեղից օգնություն ես պատում, հոգևոր խնդիր չեն տեսնում... Ուրեմն՝ աշխարհում, հոգևորից բացի, ուրիշ խնդիրներ էլ են գոյություն ունեցել, չենք իմացել... Կամ քարտ ստացիր, կամ շան պես սոված սատկիր, բայց մտքովդ անգամ չանցնի, թե մարդը հոգևոր արարած է։ Մյուս կողմից էլ ճիշտ են,

այր. մենք ենք, չէ՞, որոշում։ Ու միշտ էլ՝ մի քանի դրամի համար... Ու միշտ՝ մենակ թողնելով նրանց, ովքեր գիտեն... «Ինչու՞ ընկրկեցիր, անհավատ»։

Ողորմիր, Տեր։
Թաթա Սիմոնյանը բոլոր հնարավորություններն ունի թքելու դրանց քարտերի քթին։

Չարենցի մասին։ Խելքս չի հերիքում։ Ասա, այ տղա, վերևում ժամանակից ու տարածությունից էիր բլբլացնում ... Էն անեկդոտի նկարիչին հիշու՞մ ես։ Ասում է՝ երկու նկար են արել, հորս նկարը չի ստացվել, նման չի, իսկ Քրիստո՞ս ... իսկը Ինքն է։ Չարենցի մասին պիտի Հրանտ Մաթևոսյանի պես խոսես։ Ինչպես և խոսել է։ Աստծունը՝ Աստծուն, Գրինը՝ Գրին։ Ես ինչ, մտքիս մեջ Չարենց արտասանելով՝ քայլում եմ քաղաքիս դատարկ փողոցներով, և, գիտե՞ս, բռնում է. ձայնը՝ կա, բարբառելը՝ կա, անապատը՝ կա ու կա։

Տարատեսակ բաների մասին։ Ավելի տարատեսակ բան, քան իմ ոտանավորներն են, ես չեմ պատկերացնում։ Դրանցից մեկով, որ վերջերս են «մոզոնել», ավարտեն էս՝ հավանաբար անհաջող, խաղ-խոսքը։


Առավել է, մարդն առավել է, քան մարդը, սերն՝ առավել, քան սերը, կյանքը՝ քան կյանքը։

Եվ միայն աստղերն են - հեռավոր, անհասնելի՝ - որ հավասար են իրենք իրենց։

Սի հեռավոր աստղ է Հայաստանը...
Մա ինքն է իր չափը, «որով չափվելու է»։

Վրաստանում հայկական մշակութային հուշարձանների ոչնչացման մասին պայմոդ երկու նոր գիրք

Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպությունը (RAA <http://www.raa.am/>) երկու գիրք է հրատարակել՝ Վրաստանում գտնվող հայկական մշակութային հուշարձանների և վիրահայության վերաբերյալ։



Սամվել Կարապետյանի հեղինակած «Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն» աշխատության զարգացմանը ծնվել է այն ժամանակ, երբ հեղինակն առիթ է ունեցել Վրաստանի «Արմազի» թանգարանում տեսնելու երբեմնի հանրահայտ Կովկասյան թանգարանից այստեղ փոխադրված և անմխիթար վիճակում գտնվող հայկական հուշակոթողները։

Պարզվում է, որ դրանք Հայաստանից այստեղ են հայտնվել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ մեր մշակութային նվիրյալների այն մտահոգությամբ, որ դրանք կարող են պատերազմից տուժել։ Սակայն պատերազմի ավարտից հետո 1919թ. Վրաստանի կառավարությունը ազգայնացրել է դրանք։ Հայաստանի առաջին Հանրապետությունը փորձել է բանակցությունների միջոցով Կովկասյան թանգարանի մաս կազմող հայկական մշակութային արժեքները վերադարձնել Հայաստան, բայց արդյունքի չի հասել։

Խորհրդային միության տարիներին Կովկասյան թանգարանն անցել է Վրաստանի Գիտությունների ակադեմիայի ենթակայության ներքո։ Թանգարանի հավաքածուները պահպանության նպատակով բաշխվել են երեք հաստատությունների միջև։ Դրանք են՝ Վրաստանի ար-


վեստի պետական թանգարանը, որի նկուղում հանգրվան են գտել սեպագիր արձանագրությունների ժողովածուն, Թբիլիսիի ձեռագրերի ինստիտուտը, որին բաժին է հասել Առաջին աշխարհամարտի տարիներին Արևմտահայաստանից հավաքված ձեռագրերը, իսկ միջնադարյան զանազան հուշակոթողներն ու արձանագրությունները փոխադրվել են Թբիլիսի-Սցխեթ ճանապարհին գտնվող «Արմազի» թանգարան։

Վերջինիս միաժամ և անշուք շինությունը 1988-ին գտնվում էր ծայրահեղ, մինչև իսկ վթարային վիճակում։ Թանգարանի հայկական նյութերի սրահում ներկայացված ցուցանմուշներն արդեն զուրկ են բացատրագրերից։ 1993-1994 թթ. ցուցանմուշների վրա փլուզվեց թանգարանի բետոնածածկ տանիքը։ Կոտրատվեցին մի շարք արձանագրություններ և խաչքարեր։ 2004թ. կիսավեր թանգարանի ներսում և բակում թափված կոթողների զգալի մասն անհետացած էր, իսկ մյուսները փլվածքների և աղբի մեջ էին։

Ա-ԻՆՖՈ-ին տված հարցազրույցում Սամվել Կարապետյանը նշում է, որ 1919թ.-ին հայկական պետությունը գտնվելով ռազմաքաղաքական ծանր վիճակում, այնուամենայնիվ փորձել է Թբիլիսիում հանգրվանած հայկական մշակութային արժեքներին տեղ կանգնել։ Օրինակ՝ երևան է տեղափոխվել Նիկողայոս Արղությանի գրադարանը, որը Հայաստանի հանրային գրադարանի հիմքն է հանդիսացել։ Նա միաժամանակ ցավ է հայտնում, որ այսօր Հայաստանի Հանրապետության իշխանություններն այդ ուղղությամբ ոչինչ չեն անում։ «70 տարի խորհրդային կարգերի օրոք «եղբայր-եղբայր» էինք խաղում, ոչինչ չարվեց մեր մշակութային արժեքներին տեղ կանգնելու համար։ Թվում էր, թե անկախ Հայաստանը պետք է որևէ բան ձեռնարկի, սակայն մերօրյա իշխանությունների կեցվածքը հայկական մշակութային հուշարձաններին տանդեպ նույնն է, ինչ բոլշևիկներինը», - ասում է Ս. Կարապետյանը։

Նույն հեղինակի մյուս՝ «Հայերը Կախեթում» գրքում փաստական նյութի համալիր ուսումնասիրության հիման վրա ներկայացված է Կախեթի (Արևելյան Վրաստան) հայկական գաղթավայրերի պատմությունը։ Ձգալի տեղ է հատկացված երկրամասում պահպանված հայկական պատմական հուշարձաններին։

«Վրացական մամուլը գրում է, որ Կախեթի հայերը գրիգորյան վրացիներ են, որոնց հայ միսիոներները 19-րդ դարում կաշառելով հայ են մկրտել և անվանափոխել», - Ա-ԻՆՖՈ-ին




ասում է Ս. Կարապետյանը։ «Մինչդեռ ինչպես ցույց է տրված գրքում, Կախեթում մինչև 1000 տարվա պատմություն ունեցող հայկական բնակավայրեր կան», - շարունակում է հեղինակը։

Համախմբված ազգային եկեղեցու շուրջը կախեթաբնակ հայերի առջև արդեն 19-րդ դարում ծառանում է ուժացման հեռանկարն ուրվագծող խնդիրներ։ Հակազդելու միակ միջոցը վրացական միջավայրին կուլ գնացող մայրենին փրկելն էր։ Հենց այս մտահոգությամբ էլ 19-րդ դարի 2-րդ կեսից երկրամասի մի շարք քաղաքներում և գյուղերում բացվում են հայկական դպրոցներ։ Սակայն Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո իրար հետևից փակվում են Կախեթի հայկական եկեղեցիներն ու դպրոցները։ Արդեն 30-ական թվականներին, երկրամասին հայ բնակչության ծուլումը կանխող պատվարները՝ հայոց դպրոցն ու եկեղեցին, գրեթե ոչնչացված էին։

Գրքում նշվում է նաև, թե ինչպես են այսօր վրացականացվում հայկական եկեղեցիները։ Սամվել Կարապետյանը Կախեթի Գրեմ քաղաքի (այսօր՝ գյուղ, Դվարեի շրջանում) սբ. Աստվածածին եկեղեցու վրացականացման վերաբերյալ Ա-ԻՆՖՈ-ին հայտնեց հետևյալ դրվագը. «Գրեմում այսօր վրացական վանական համալիր է գործում։ Երբ այդ վանական համալիրի քահանաներից մեկին սբ. Աստվածածնի վերա-

Անապատի գիշերներում



Մեկ տարուց ավելի է «Յետք»-ը հետաքննություն է կատարում հայ կանանց վաճառքի մասին. ինչպե՞ս են նրանք հայտնվում Արաբական միացյալ էմիրություններում, ի՞նչն է նրանց ստիպում բռնել այդ ճանապարհը և զբաղվել մարմնավաճառությամբ, ու՞րքե՞ր են ղեկավարում կանանց վաճառքի «բիզնեսը» Հայաստանում և Արաբական միացյալ էմիրություններում, և ինչու՞ չեն պատժվում այդ ղեկավարները:



Ի՞նչ քայլեր են ձեռնարկում Հայաստանի և էմիրությունների իրավապահ մարմինները կանանց վաճառքը կանգնեցնելու համար: Այս հարցերի պատասխանները «Յետք»-ի հետաքննական թիմը կտա «Անապատի գիշերները» հոդվածաշարով և ֆիլմով: Ներկայացնում ենք այդ շարքի առաջին նյութը:

Տաքսու պակիստանցի վարորդը շարունակում է պատասխանել մեր հարցերին: Վարորդները ինֆորմացիայի հրաշալի աղբյուր են, նրանք շատ բան գիտեն:

Նրանք գիտեն՝ որտե՞ղ են կանգնում կանայք, նրանց ճանաչում են նույնիսկ ազգություններով: Ասենք՝ որտե՞ղ կարելի է գտնել ռուս, չինացի, իրանցի, հայ կանանց կամ մինչև 18 տարեկան աղջիկներին:

Նրանք մեզ խորհուրդ են տալիս այցելել լավագույն գիշերային դիսկոտեկը:

Դուբայի վարորդները, որոնք հիմնականում պակիստանցիներ են և հնդիկներ, պատմում են Շեյխի, նրա հարազատների ապարանքների, ունեցվածքի, բիզնեսի մասին:

Մենք հայտնվում ենք Դուբայի բնակելի թաղամասերից մեկում՝ նախապես իմանալով, որ էժանագին հայ մարմնավաճառներն այստեղ են:

Հասնում ենք այդ վայրը, որտեղ շենքերի մուտքերի մոտ երևում են չինացի, ռուս, ուզբեկ և հայ կանայք. նրանք սպասում են հաճախորդներին:



Հաճախորդներն էլ տեղում ընտրություն են կատարում, սակարկում և համաձայնության գալուց հետո բարձրանում բնակարան-հասարակաց տները:

Դուբայի իշխանությունները, ոստիկանությունը, անշուշտ, գիտեն, որ այս շենքերում հարյուրավոր ման բնակարաններ կան:

Էժանագին այս կանանց հաճախորդները Դուբայում աշխատող պակիստանցիներն են, իրանցիները, հնդիկները և հարևան մուսուլմանական երկրների արաբները: Հաճախորդները մտնում են սենյակները և 5, 10 կամ 15 րոպե անց դուրս են գալիս: Մարմնավաճառների մատուցած «ծառայության» գինը 10, 15, առավելագույնը 20 դոլար է: Օրվա ընթացքում հաճախորդների թիվը երբեմն անցնում է մի քանի տասնյակը:

Այստեղի մարմնավաճառ կանայք հիմնականում փնթի են, անգրագետ ու գեռիկ:

Մենք իջնում ենք տաքսիից և միանգամից գրույցի բռնվում երեք հայ կանանց հետ: Իբրև թե՛ պատահաբար այդտեղ հայտնորոգության վերաբերյալ հարցնում են, թի ինչու գմբեթը դեռ չի նորոգված, քահանան հանգիստ պատասխանում է. «Եկեղեցու ճակատին հայերեն, վրացերեն և պարսկերեն արձանագրություններ կան, մենք հայերենը և պարսկերենը կցնջենք, կթողենք միայն վրացերեն արձանագրությունը և դրանից հետո եկեղեցու գմբեթը վրացական ձևով կկառուցենք»:

«Այսքանից հետո Վրաստանը փորձում է Եվրոպական տան անդամ դառնալ», - շարունակում է Ս. Կարապետյանը:

Ի դեպ, RAA կազմակերպությունը արդեն հրատարակության է պատրաստել «Ջավախքի և Վրաստանի հայությանը վերաբերվող ևս երկու գիրք. «Ջավախքի պատմական հուշարձանները» և «Հայկական եկեղեցիներ Վրաստանում»:

Նրված զբոսաշրջիկներ ենք:
- Հայե՞ր եք, - հարցնում ենք:
- Հա, - լսվում է պատասխանը:
- Ի՞նչ եք անում այստեղ:
- Ի՞նչ պիտի անենք, անտեր շան նման թափառում ենք:

Նրանց խնդրեցինք գրուցելու համար բարձրանալ իրենց մոտ: Մենք գաղտնի նկարահանում էինք այս ամբողջ ընթացքը ֆիլմ պատրաստելու համար: Սակայն նրանց դեմքերը կամ նկարները չենք կարող ցուցադրել, որովհետև նրանցից շատերն անուսնացած են և երեխաներ ունեն: Նրանց ընտանիքների հիմնական մասը չգիտի, որ իրենք Դուբայում են և զբաղված են մարմնավաճառությամբ:

Բնակարանում գտնվող 6 կանանցից միայն մեկն էր երևանցի: Մյուսները Հայաստանի փոքրիկ քաղաքներից են և գյուղերից: Կանանց ներկայացանք իբրև Միացյալ Նահանգներից հանգստանալու նպատակով Դուբայ ժամանած հայեր՝ երկուսս իբրև նախկին հայաստանաբնակներ, երրորդը՝ բնիկ ամերիկահայ:

Փողոցում կանգնած կանայք չեն կարող հենց այնպես լքել իրենց կանգնելու վայրը: Նրանց «Բոսը», ինչպես պատմեց կանանցից մեկը, օրը հինգ-վեց անգամ ամենատարբեր ժամերի տաքսիով գալիս պտտվում է՝ տեսնելու կանայք տեղում են, թե ոչ: Վեց հայ կանանց այս սենյակում վերահսկում է Անուշ անունով երևանցի կինը:

Օրական քանի՞ հաճախորդ եք ունենում, - հարցնում ենք:
- Եսի՛մ, - ասում է Անուշը:
- Վտանգավոր չէ՞:
- Չէ, արդեն ճանաչում ենք օրվա մարդկանց, - պատասխանում է նա:

- Հայ կանայք շա՞տ են Դուբայում:
- Ասդ Հայաստանդ էստեղ է, էլի, - ասում է ջերմուկցի Նարան:

Որոշ ժամանակ գրուցելուց հետո, ցույց տալով 17-ամյա մի աղջկա լուսանկար, ասացինք, որ մեր բարեկամն է և նրան ենք փնտրում:

Ջերմուկցի Նարան ասաց. «Գործն այսպես է. ոչ ոք քեզ չի կարող ստիպել, եթե դու ցանկանում ես, էս գործը անում ես, եթե չես ցանկանում, գնում ես պոլիս ստեյշն (Police station), ասում ես: Վեց տարի է Դուբայում եմ: Եթե քեզ քվում է, թե ֆինանսական պրոբլեմներով ենք եկել Դուբայ հասել, չէ:

- Բա ինչու՞ ես եկել:
- Պետք է եղել, եկել եմ: Հիմա իմ քաշին փողն էլ ունեմ, ոսկեղենն էլ ունեմ, տունն էլ ունեմ՝ Դուբայում էլ, Հայաստանում էլ: Ինձ ոչ մեկը չի կարող մի բան ասել, - պատասխանում է ջերմուկցի Նարան:

Այնուհետև կանայք ասում են, թե ինչպես կարելի է գտնել լուսանկարի մեր բարեկամին՝ ո՞ր դիսկոտեկները, գիշերային ակումբները այցելենք նրան փնտրելու համար:

Վեց հոգանոց այս խմբի մեջ կային երկու կանայք, որոնց խաբեության մեջ բերել Դուբայ: Մյուսները եկել են սեփական կամքով: Հենց այդ երկուսը մեր գրույցի ամբողջ ընթացքում որևէ բան չարտասանեցին: Իսկ մեր բնակարանում գտնվելու ժամանակ հաճախորդները ելումուտ էին անում կողքի սենյակներ: Մեր ներկայությունը որևէ կերպ չխանգարեց նրանց աշխատանքին:

Հրաժեշտի ժամանակ հիշատակված երկու կանայք հասցնում են պատմել, թե ինչպես են իրենց խաբեությամբ բերել Դուբայ: «Ինձ ասացին, որ գնում ենք Բուլղարիա՝ ծաղկի խանութում աշխատելու: Հետո Մոսկվայից բերեցին այստեղ: Ամուսնացած եմ, ունեմ երկու երեխա: Արդեն մեկ տարի է այստեղ եմ, անուսինս գիտի, թե ես Բուլղարիայում եմ: Տուն փող եմ ուղարկում, երբեմն հեռախոսով խոսում եմ երեխաներիս հետ: Ի՞նչ արած, չգիտեմ էլ ինչ պետք է լինի սրա վերջը», - ասաց մասիսցի կինը:

Երբ կանգնած էինք փողոցում, հայ կանայք մեզ ասացին՝ արագ մտաք տաքսի, թե չէ ոստիկանությունը կարող է գալ և բռնել մեզ:

Նրանք խնդրեցին նորից այցելել իրենց:

Նստելով տաքսի՝ շարժվում ենք առաջ՝ հանդիպելու այսօր Դուբայում ամենահայտնի կավատի՝ Մարիետայի կանանցից մեկին:

Էդիկ ԲԱՂՎԱՍՏՐՅԱՆ, Արա ՄԱՆՈՒԿՅԱՆ
www.hetq.am

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐՅԱՆԸ ՖԻԼԱՏԵԼԻԱՅՈՒՄ



Լրացավ 20-րդ դարի հայ խոշորագույն նկարիչ, ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ, ՍՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, Սոցիալիստական աշխատանքի հերոս Մարտիրոս Մարյանի ծննդյան 125-ամյակը: Նրա արվեստը բարձր է գնահատվել ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի շատ երկրներում: Լույս են տեսել նրան նվիրված տարբեր հոդվածներ, գրքեր, նկարահանվել ֆիլմեր: Ֆիլատելիայում նույնպես կան նամականիշեր, ծրարներ, փոստային քարտեր, հատուկ դրոշմակներ՝ նվիրված Վարպետին:

Մարյանի նախնիները եղել են Ղրիմ գաղթած անեցիներ, որոնք հետո տեղափոխվել են մասնակցել Նոր Նախիջևանի հայկական գաղութի ստեղծմանը: 1897-1904թթ. Մարյանը սովորել է Մոսկվայում ռուս ականավոր նկարիչներ Կ. Կորովիևի և Վ. Սերովի մոտ: 1901թ. առաջին անգամ մեկնել է Կովկաս, եղել Երևանում, Աշտարակում, Վաղարշապատում, Սևանում, 1902-ին՝ Անիում: Երիտասարդ նկարիչը հափշտակվում է հայրենի բնաշխարհով և ուսման հաջորդ տարիների ամռան ամիսները կրկին անցկացնում հայրենի հողում:

1915թ. հայրենասեր նկարիչն աշխատել է «Հայերին օգնող մուսկոլյան կոմիտեում», թողել վրձինը և Մոսկվայից եկել Էջմիածին՝ Մեծ եղեռնից փրկված հայ գաղթականներին օգնելու նպատակով: Հինգ տարի շարունակ արվեստագետը տարված էր հայրենանվեր գործունեությամբ: Իսկ երբ Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգերը, նա ընտանիքով մշտական բնակու-

թյուն է հաստատում Երևանում:

1921թ. Մարյանը Հ. Կոջոյանի հետ ստեղծում է Սովետական Հայաստանի պետական գերբը, որի պատկերով 1937-ին թողարկվում է նամականիշ: Նմանատիպ նամականիշեր տպագրվել են նաև 1947 թվականին, 1950-ին, 1960-ին և այլն:

1973-ին թողարկված նամականիշի վրա պատկերված է 1923թ. Մարյանի վրձնած «Լեռներ: Հայաստան» կտավը, որտեղ նկարիչը օդի, լուսյի և գույների կախարհիչ դաշնությամբ կերտել է լեռնային մեր երկրի հավաքական կերպարը: Մեկ այլ նամականիշի վրա Մ. Մարյանի «Հին Երևան» աշխատանքն է (1928թ.), ուր պատկերված է մայրաքաղաքի խաղաղ բակերից մեկը: Այդ նամականիշը թողարկվել է նկարչի ծննդյան 100-ամյակի առթիվ: Նույն հոբելյանին է նվիրված նաև Վարպետի դիմանկարով և հատուկ դրոշմակով ծրարը:

Մ. Մարյանի ստեղծագործությունների մեջ մեծ տեղ են գրավել դիմանկարները: Լույս են տեսել նամականիշեր Ա. Իսահակյանի և Ա. Սպենդիարյանի՝ Մարյանի վրձնած դիմանկարներով:

1967թ. Երևանում բացվեց Մարյանի տուն-թանգարանը, ուր զբոսնում է նրա ստեղծագործական ժառանգության զգալի մասը: Մարյանի տուն-թանգարանի պատկերով լույս է տեսել 2 ծրար՝ 1980 և 1986 թվականներին:

Հայաստանի Հանրապետությունում 2000թ. թողարկվել է նամականիշերի «Հայերը 20-րդ դարի մշակույթին» գրքույկը, որտեղ կա նաև Մ. Մարյանի դիմապատկերը:



«ԵՍ ՊԵՏՔ Է ՄՆԱՅԻ ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿՐՈՒՄ»



«... Վազդի ճկունությունը ու ծիու նրբագեղությունը համատեղող քայլվածք ուներ: Ակնհայտորեն վայլեչա տես էր: Կրակոտ, թուխ աչքերով, հպարտ արծվաթքով և ցայտուն սև հոնքերով: Բոլոր երիտասարդ աղջիկների ու կանանց երազանքն էր...»: Ռ. Ս.:

Եվս մի վկայություն. «Արածն իմացա՞ք... Ձին կքշի, կմտնի «Օրիանտ» ռեստորան, տարը պորցի պրնձով, չամչով փլավ կառնի, կկեցրնի ձիուն...»: Գ. Ս.:

Ո՞ւմ մասին է խոսքը, ովքե՞ր են Ռ. Ս.-ն և Գ. Ս.-ն: Կփորձեն օգնել ձեզ: Բայց մինչ այդ վերհիշեն իմ կյանքից մի փաստ:

1970-ականների երկրորդ կեսին իմ ազգական և ընկեր Ջենիկ Սարգսյանի հրավերով ես ու մի քանի վստահելի տղաները ՀՍՍՀ կինոֆոտոարխիվի նորակառույց շենքի փոքրիկ դահլիճում հուժ գաղտնի պայմաններում բախտ ունեցանք դիտելու ուշագրավ կադրեր՝ նկարահանված անցյալ դարասկզբին: Դրանք պատկերում էին հայկական կոտորածները, թուրքական բանակի վայրագությունները, այնուհետև 1945թ. Պեր Լաշեզում Անդրանիկ զորավարի հուշարձանի բացումը, իսկ վերջում ցուցադրվեց «Անդրանիկ» գեղարվեստական կինոնկարը, որի ռեժիսորն ու գլխավոր դերակատարը Արշավիր Շահխաթունյան էր: Վաղը մենք ազգովի կնշենք զորավարի 140-ամյակը, իսկ մեկ շաբաթ առաջ լրացավ Շահխաթունու 120-ամյակը: Նախկինում մենք քիչ բան գիտեինք այդ նշանավոր մարդու՝ հայ սպայի, դերասանի, կինոգործի մասին: Սակայն վերջերս լույս է տեսել Արծվի Բախչինյանի «Հայերը համաշխարհային կինոյում» ընդգրկուն և, իմ խորին համոզմամբ, արտակարգ հետաքրքիր աշխատությունը, որտեղ ներկայացված են համաշխարհային կինոյի շուրջ 2200 հայ և ծագումով հայ ակնառու գործիչներին վերաբերող ակնարկներ, որոնցից մեկը նվիրված է Արշավիր (Աշ) Շահխաթունուն: Օգտվելով կինոգետի հավաքած նյութերից՝ ներկայացնեն որոշ տվյալներ Շահխաթունու մասին:

Ծնվել է 1885թ. փետրվարի 17-ին Արևելյան Հայաստանի հին ազնվական ընտանիքում: Հայրը եղել է ռուսական բանակի գնդապետ, Ալեքսանդրապոլի գավառապետ: Պատանի Աշոն սո-

վորել է Թիֆլիսի ռազմական ուսումնարանում: Ծառայել է Բաքվում, որտեղ էլ սկսել է մասնակցել սիրողական թատերախմբերի ներկայացումներին: Աշխատել է Սիրանուշի, Աբելյանի և Ջառիֆյանի թատերախմբերում, հյուրախաղերով հանդես է եկել Մոսկվայում, Ռուսաստանի այլ խոշոր քաղաքներում: Եղել է հայ բեմի առաջին Ռոմեոն, խաղացել է շեքսպիրյան այլ պիեսներում: Կինոյում իր մուտքը կայացել է 1912թ. Մոսկվայում: Խաղացել է մի քանի կինոնկարներում, հանդես է եկել հիմնականում գլխավոր դերերում: Համարվել է կովկասյան գեղեցկության տիպար:

1918թ. վերադարձել է Հայաստան: Մասնակցել է Սարդարապատի, Բաշ Ապարանի ճակատամարտերին: Այնուհետև նշանակվել է Երևանի պարետ: Ահա այս շրջանին է վերաբերում այն դեպքը, որը հիշատակում է Գ. Ս.-ը՝ նույն ինքը Գուրգեն Մահարին «Երիտասարդության սեմին» իր վիպակում: Հետագայում այդ դեպքը ծաղրական երանգով է վերարտադրվել հայկական (արդեն սովետական շրջանում) կինոնկարներից մեկում: Այլ կերպ չէր էլ կարող լինել. բոլշևիկները չէին կարող ներել Շահխաթունուն, նրա հակասովետական տրամադրությունները: Հենց այդ պատճառով էլ նա ստիպված էր լքել Հայաստանը 1920-ին: Սկզբում Կ. Պոլիս, 3 տարի անց՝ Սոֆիա, այնուհետև՝ Փարիզ: Նպատակ ուներ տեղափոխվել Ամերիկա, սակայն մնաց Ֆրանսիայում մինչև կյանքի վերջը՝ 1957թ.: Մշտապես գտնվել է Փարիզի հայ թատերական կյանքի կենտրոնում: Վահրան Փափազյանի հետ խաղացել է Շիլլերի «Ավագակներ» դրամայում՝ հավասարապես բաժանելով հանդիսականների ծափերն ու ծաղիկները:

Ֆրանսիական կինոռեժիսորները նույնպես ուշադրություն են դարձնում Շահխաթունու վրա: Համաշխարհային կինոյի խոշորագույն դեմքերից մեկը՝ Աբել Գանսը, հրավիրում է նրան նկարահանվելու իր «Նապոլեոն» ֆիլմում՝ Բոնապարտի մանկության ընկեր և հետագայում ռիսերին թշնամի Պոցո դի Բորդոյի դերում: Հետագայում Շահխաթունին մտերմանում է Ռընե Կլերի, Ժյուլյեն Դյուվյեյի, Ժան Էպտեյնի, անգլիացի մեծանուն դերասան Լորենս Օլիվյեի հետ:

... Ջորավար Անդրանիկի վախճանից (1927թ.) հետո ընդամենը երկու տարի անց Ֆրանսիայում ցուցադրվեց «Անդրանիկ» խա-

ԽՄԲԱԳՐԵԼ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ԹԵ՞ ՌԻԴԵՂՆԵՐԸ

Եվրասթեբները և սիմվոլիկան

Եվրամիության անդամ երկրների նախարարների խորհուրդը քննարկելու է միության բոլոր պետություններում նացիստական սիմվոլիկայի արգելման հարցը: Ըստ որում՝ առաջարկվում է Գերմանիայի օրինակով Եվրամիության ողջ տարածքում արգելել սվաստիկայի, էս-էս-ի խորհրդանիշ կրկնակի կայծակների և ֆաշիստական այլ խորհրդանիշերի պատկերներով կրծքանշանների, հագուստների, այլ առարկաների գործածումը: Թվում է, թե այդպես էլ պետք է լինե՞ր ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի 60-ամյակի նախաշեմին: Բայց՝ Մի խումբ երկրների, կոնկրետ Յունգարիայի, Չեխիայի, Սլովակիայի, Էստոնիայի և Լիտվայի ներկայացուցիչները, օգտվելով առիթից, դիմել են Եվրամիությանը, առաջարկելով նացիստականին զուգահեռ և նույնքան միանշանակ արգելել նաև կոմունիստական սիմվոլիկայի՝ մուրճ ու մանգաղի, կարմիր աստղի և դրանց պատկերներով առարկաների գործածումը: Առաջարկության հեղինակները դա փորձում են հիմնավորել նրանով, թե կոմունիստական, սովետական համակարգը նույնքան անմարդկային է եղել, որքան հիտլերյան ֆաշիզմը: Քավ լիցի, Եվրամիության արդարադատության կոմիտարը հիշյալ առաջարկության հեղինակներին մասնավորապես պատասխանել է, որ չնայած կոմունիստական վարչակարգը, որպես բռնապետական, բազում անմեղ մարդկանց տառապանքի պատճառ է դարձել, այնուհանդերձ ռասիզմ, հակասեմիտիզմ և այլազգիների նկատմամբ թշնամանք խորհրդանշող նացիստական սիմվոլիկան պետք է զանազանել կոմունիստականից: Բայց թողնենք Եվրամիությանն իր տվյալանքների մեջ և դառնանք մեր իրականությանը: Հայաստանում էլ քիչ չեն խորհրդային ժամանակաշրջանի գանգաճ խորհրդանիշերը, ըստ որում «ամրագրված» ճարտարապետական կոթողներով, անգամ շենքերի պատերին, դարպասներին և այլն: Հենց կառավարության շենքի ճակատը զարդարված է նաև մուրճումանգաղային, աստղե բարձրաքանդակներով: Կապի նախարարության մուտքի դարպասի վրա համերաշխ հարևանություն են անում մուրճ-մանգաղն ու ՀՀ զինանշանը: Ոմանք կարող են ասել, թե սիմվոլիկայի գործածման հարցը մեզանում որևէ հնչեղություն չունի: Բայց նկատենք նաև, որ գրականության ինստիտուտի միստերի դահլիճի պատերի մուրճ ու մանգաղները ժամանակին «սրբագրվել» էին փմականների կողմից: Ընդհանրապես արժե՞ սրբագրել մեր պատմության սովետական-կոմունիստական շրջանի խորհրդանիշերը, ջնջել դրանք, արգելել դրանց պատկերող առարկաների գործածումը: Այս հարցով դիմեցինք մեր հայտնի մտավորականներից մի քանիսին: Բանաստեղծ ԱՐԱՄՍՅԱՅԻ ՍԱՀԱՎՅԱՆԸ մասնավորապես ընդգծեց, որ պատմությունը պետք է սովորել, այլ ոչ թե խմբագրել: «Անցյալի լավն էլ է պետք հիշել, վատն էլ: Մեկը՝ զարգացնելու, մյուսը՝ չկրկնելու համար: Երբ հիշակամներից մեկին ասացի՝ ամոթ ձեզ, ամեն ինչ քանդեցիք, հակադարձեց, թե ինչո՞ւ ես ամոթանք տալիս, վա՞ տ ենք քանդում: Այսինքն՝ մարդիկ կան քանդելով են ուրախանում: Բայց եթե այսօր քանդենք կամ ջնջենք ու խմբագրենք երեկվա ստեղծվածն ու խորհրդանիշերը, վաղն էլ հիմիկվա ստեղծածն են քանդելու ու ջնջելու»: Հրապարակախոս ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ նշեց, որ նախ միանգամայն դեմ է, երբ ֆաշիզմը և բոլշևիզմը դրվում են նույն հարթության վրա: Թեև ընդհանուր ինչ-ինչ գծեր իրոք կան, բայց այդ ռեժիմները մարդկության դեմ գործած ոճիրների առումով, ըստ մեր գրուցակցի, սարունորի տարբերություն ունեն. «Ֆաշիզմը մարդատյաց, ռասիստական գաղափարաբանություն է: Բոլշևիզմը հնարավոր չէ այդպիսին համարել, թեև տասնյակ, հարյուր հազարավոր մարդկանց հալածեցին, զնդակահարեցին, քշեցին ճամբարներ: Բայց դա ռասիստական բնույթ չէր կրում, թեպետ պակաս չարիք չէր: Ամեն դեպքում անցած 70 տարիները մեր պատմությունն են և փառավոր պատմությունը նաև: Այդ 70 տարիները մեր երկրի կառուցման, ժողովրդի բարգավաճման, մշակույթի, կրթության, արդյունաբերության զարգացման տարիներ էին: Անհնար է լինել ռասիստ ու միաժամանակ զարգացնել փոքր ժողովուրդների մշակույթը, արդյունաբերությունը»: «Գոյ» թատրոնի գեղարվեստական ղեկավար ԱՐՄԵՆ ՄԱԶՍԱՆՅԱՆԸ ևս գտնում է, որ «չպետք է մոռանալ 70 տարվա անցյալը, որ ուզենք, թե չուզենք, պիտի ընդունենք. այդ 70 տարում մեր քրքրված ժողովուրդը այնուհանդերձ ունեցավ

գիտությունների ակադեմիա, Մատենադարան, ի վերջո, այն բազան, որի վրա ստեղծվեց պետություն...: Ինչո՞ւ ենք ուզում էլի խմբագրել մեր պատմությունն ու ստել: Ի՞նչ է, մեր սերունդներին ստելու ենք, թե սովետական կարգեր չե՞ն եղել: Ես անձամբ տուժել եմ այդ կարգերից, քաղբանտարկյալի որդի եմ, հայրս 15 տարի Սիբիրում նստել է: Բայց դա չի նշանակում, թե պիտի դնեմ նորագույն պատմություն գրեմ, թե հայերը սովետական կարգերում չեն ապրել: Իմ բնությանը լինելով հակակոմունիստ, կարծում եմ, պատերը, խորհրդանիշերը մաքրել-խմբագրելով մեր ազգային նկարագիրը չի մաքրվելու: Պետք չէ խմբագրել պատմությունը, պետք է խմբագրել այն ուղեղները, որ հիմա «եվրասթեբներ» են բերում, մեր գլխին խփում, ինչ է թե՛ մի կես միլիոն գրամո ստանան, իրար մեջ լափեն ու «Համներ» քշեն»:

Արմեն ՀԱՎՈՐՅԱՆ

ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐ ԶԿԱՆ

ՌԴ-ից ՀՀ քաղաքացիների՝ Հայաստան և ՀՀ-ից ՌԴ քաղաքացիների Ռուսաստան կամավոր վերաբնակեցման գործընթացի կարգավորման համաձայնագրի արդյունքում դեռևս ո՛չ ՀՀ, ո՛չ ՌԴ քաղաքացիների կողմից իրենց երկրներում վերաբնակվելու ցանկություն արտահայտող դիմումներ չեն ստացվել: Սպասվում էր, որ համաձայնագիրն ավելի կխթաներ Ռուսաստանում գտնվող մեր քաղաքացիների վերադարձը, սակայն արձագանքներ չեղան: Նշենք, որ համաձայնագրով վերաբնակներն ազատվում են անձնական գույքը ՀՀ կամ ՌԴ տարածք ներկրելու կամ դուրս բերելու սահմանափակումներից, մաքսային տուրքերի վճարումներից, հարկերից և դրա հետ կապված գանձումներից: Վճարումներից և մաքսատուրքերից ազատվում են նաև դուրս բերվող դրամական միջոցները և փոխանցվող դրամական ավանդները, բացի այն վճարներից, որոնք կատարվում են փոխանցման ծառայությունների դիմաց:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

«ՋԵՐԱՐԴ Լ. ԳԱՖԷՍՏՅԱՆ»



Երևանի քաղաքապետարանը հավանության է արժանացրել «Ջերարդ Լ. Գաֆեստյան» ժամանակակից արվեստի թանգարանի ճարտարապետական նախագիծը: Թանգարանի շինարարությունը նախատեսվում է սկսել այս տարվա գարնանը, իսկ երկու տարի անց կառույցը դռները կբացի արվեստասերի առջև: Նախագծի հեղինակն է Նյու Յորքի «Ղեյվիդ Հաթսնը» ճարտարապետական ընկերության տնօրեն Ղեյվիդ Հաթսնը, որը հայտնի է մի շարք կարևոր ծրագրերով՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի համար նախատեսված գրասենյակի, Նյու Յորքի Մանհեթեն շրջանի աֆրիկյան արվեստի թանգարանի նախագծերով: Նշենք, որ թանգարանի հիմնական կառույցը կներդրվի Կասկադը, որն արտաքին աստիճաններով և կերքին շարժասանդուղքով իրար է կապում Թամանյանի պուրակը և Արաբկիր համայնքը: Թանգարանի շենքը կունենա նաև հանրային հանգստավայրեր, դեկորատիվ ավազան, քանդակներ, այգիներ, սրճարան և բացօթյա կինոթատրոն: 25 մետր բարձրությամբ ապակե աշտարակում կներկայացվի Ջ. Գաֆեստյանի հավաքածուն՝ ապակեգործներ Ստանիսլավ Լիբեմսկու և Յարոսլավ Բրիխտովայի աշխատանքները: Ապակե աշտարակի և թանգարանի շենքի կողքին վեր կխոյանա նաև անկախության հուշարձանը, որի կառուցման համար ևս կհայտարարվի մրցույթ: Թանգարանի մշտական ցուցադրությունը կներառի 20-րդ դարի նկարչության և քանդակագործության մշանավոր նմուշներ: Տաղ հազար քմ տարածք զբաղեցնող թանգարանը կիյունակալի նաև համաշխարհային ճամփորդող ցուցահանդեսներ: Ծրագրի արժեքը 25 միլիոն դոլար է:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՀԱՎԸ ԵՎ ԱՔԱՂԱՂԸ ՀԱՅՈՑ ՀԱՎԱՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ

Ըստ Արևելյան օրացույցի, 2005 թվականը աքաղաղի տարի է, որը սկսվում է փետրվարի 9-ին:

Հավն ու աքաղաղը կարևոր դեր են խաղում նաև հայկական հավատալիքներում: Առաջնությունը տալով տիկնանց՝ սկսենք հավից:

Նախ և առաջ հավը ժողովրդական պատկերացումներում չարխափան է: Հայաստանի տարբեր շրջաններում սև հավ էին մորթում, թաղում դռան շենի տակ, որ չար ուժերը տուն չմտնեին: Այսինքն՝ հավը զոհաբերվում էր չար ոգիներին, որոնք զոհով բավարարվելով՝ այլևս չէին անհանգրստացնում տան անդամներին:

Հիվանդություն բուժելիս նախկինում բժշկող կախարդուհին հիվանդից սև հավ էր պահանջում, մորթում էր հավն ու արյունով նրա իսկ ոսկորների վրա աղոթքներ գրում, որոնք առողջացնում էին հիվանդին: Երբ փոքրիկ երեխան էր հիվանդանում, յոթ հավից մեկական փետուր էին պոկում, յոթ գույնի թել կապում, երեխային զրկած բարձրանում էին տան կտուրը և մոզական գործողություններ կատարելով ու հնայական բանաձևեր արտասանելով բուժում նրան:

Հարսանեկան ծիսակարգում ևս հավը կարևոր էր՝ սկսած աղջկա ձեռքը խնդրելուց մինչև բուն արարողությունը: Երբ երիտասարդը սիրահարված էր, ուզում էր խնդրել աղջկա ձեռքը, բայց ամաչում էր, լուռ ու մունջ, գաղտնագողի «շալակ» էր սարքում: Վերցնում էր մի թոփ, մեջը լրցնում պտուղներ, գիշերը տանում-դնում էր աղջկա տան դռան մոտ կամ դրսում քնած տների տղամարդկանցից որևէ մեկի զըխավերևում: Մի քանի անգամ կրկնելուց հետո աղջկա ազգականներից մեկի միջոցով հայտնում էր, որ շալակ տանողն ինքն է: Եթե աղջկա ծնողները համաձայնում էին, այդ թոփի մեջ դնում էին «խոնջա»՝ մի եփած հավ, մի քանի ձու, մի քանի գաթա և մի զույգ գուլպա և ուղարկում էին տղային՝ հանդը, որտեղ նա աշխատում էր: Այս լուռ ծիսակատարությունից հետո աղջիկն ու տղան նշանված էին համարվում: Աղջկա ձեռքը խնդրելուց հետո տղայի մայրն առաջին անգամ նրանց տուն գնալիս մի շիշ գինի և հավ էր տանում՝ փորը լցրած բրնձով ու համեմունքներով: Նշանադրության երկրորդ օրը փեսացուն նվերներով թաքուն գնում էր հարսնացուի տուն, որտեղ նրան ընդունում էր զոքանջը: Նա անմիջապես հավ էր մորթում և փլավ էր պատրաստում: Փեսան միայնակ ընթրում էր: Չոքանջը նստում էր նրա մոտ և գովում իր աղջկան: Հետո մայրը գնում, բերում էր դստերը, տղան մատանի կամ դրամ էր նվիրում:

Հարսանիքին կանայք մի կամ երկու հավ էին պատրաստում փեսայի համար: Նրանք հավը մորթում էին, փետրում, եփում, ապա գլուխը նորից կարում էին վզին: Հետո թելի վրա չամիչ անցկացնելով պատում էին ողջ մարմինը և կրկին չամի-



չով հավի մեջքին թամբ էին սարքում: Այնուհետև փորը լցնում էին թթվեղենով ու հրամցնում էին փեսային:

Հարսանյաց ծիսակատարության անհրաժեշտ տարրերից էր նաև աքաղաղը, որը պտղաբերության, աշխույժ ոգու, աճի խորհրդանիշ էր, չարխափան ու բարեբեր արարած, ուստի հաճախ պատկերվում էր հատկապես գորգերի ու կարպետների վրա:

Ժողովրդական հավատալիքներում աքաղաղը կանխարգելում էր հիվանդությունները, որոնք չար ոգիների գործունեության արդյունք էին համարվում: Նա փրկում էր նույնիսկ «թաղա» կոչվող չար ոգուց. որն առանձնապես վտանգավոր էր նորածին երեխաների և նրանց մայրերի կյանքի համար: Մարդիկ հատուկ սև աքաղաղ էին պահում, որպեսզի նա ինաց տար չար ոգու մոտենալն ու փրկել իրենց: Նաև հմաստուն թռչում էր համարվում աքաղաղը, որովհետև լսում էր երկնքի գանգերի առաջին զարկը և ինքն էլ էր թևերը թափափարում ու ձայն տալիս:

Նախկինում ասում էին, որ եթե գիշերն աքաղաղը կանչի, պետք է անմիջապես խաչակնքել և ասել. «Օրհնյալ է Աստված», որովհետև նախ երկնքի աքաղաղն է կանչում և հետո՝ երկրայինը: Անգամ կարծում էին, թե աքաղաղի կանչն է առավոտյան արեգակին երկինք բերում: Բոլոր դեպքերում աքաղաղն ավետում է նոր բացվող օրը՝ դառնալով լուսիս ու արևի խորհրդա-

նիշը: Քանի որ նա կապված է մութը վերջանալու և լույսը բացվելու հետ, նրան նաև վերածննդի գաղափար էր վերագրվում: Մ. Ք. առաջին դարերում ծնունդ առած ավանդության համաձայն, Քրիստոսը հարություն առավ աքաղաղի առաջին կանջից հետո: Այսպիսով քրիստոնեական պատկերագրության մեջ աքաղաղը դարձավ հարության խորհրդանիշը:

Աքաղաղին նաև գուշակողի դեր էր վերագրվում: Փութկու սուրբ Գևորգ վանքում միշտ պահվում էր մի աքաղաղ, որ «սուրբ Գևորգա դիկ» էր կոչվում: Այս աքաղաղը վանքում «կուսակրոն կյանք էր վարում»: զրկված հավերի հասարակությունից՝ նա ազատորեն օգտվում էր վանքի բոլոր բարիքներից և ապահով էր, որ ոչ ոք նրան վնաս չէր հասցնի և մեռնելիս էլ կթաղվեր ս. Գևորգի եկեղեցու ժամատանը: Նա գույնզգույն ուլունքներով և արծաթե դրամներով զարդարված մի մանյակ ուներ, ընտելացած էր մարդկանց և հեշտությանը բռնվում էր, ազատ շրջում էր եկեղեցու մեջ և գիշերում ժամատանը: Երբ սաստիկ բքից նեղված ճանապարհորդներն ապաստանում էին այս վանքում, սրտատրոփ սպասում էին աքաղաղի կանջին, որովհետև հավատում էին, որ փոթորիկը շարունակվելու դեպքում աքաղաղը չէր կանչի, ուստի նրա կանջը համարվում էր լավ եղանակի ազդարար:

Ոմանք էլ աքաղաղը կանգնեցնում էին իրենց գլխի վրա: Սովոր լինելով՝ թռչունը հանգիստ կանգնում էր: Ապա բռնողը միտք էր անում. «Եթե պիտի ապահով տեղ հասնեն կամ եթե վիճակված է ինձ այսինչ աղջկա կամ տղայի հետ ամուսնանալ և կամ եթե այսինչ հիվանդը պիտի առողջանա, թող աքաղաղը երեք անգամ կանչի»: Եվ հաճախ աքաղաղը մարդու գլխի վրա կանգնած կանչում էր:

Թող 2005 թվականին աքաղաղը միայն բարին ավետի Հայոց աշխարհում և ամենուր:

Աստղիկ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Հայաստանում, 2005թ. հունվարի 1-ի դրությամբ, 3780 օտարերկրյա հիմնադիրներ ներդրում են կատարել 3042 իրավաբանական անձանց ձեռնարկներում: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, նշված ժամանակահատվածում օտարերկրյա հիմնադիրների ներդրումների չափը կազմում է շուրջ 247 մլրդ 998,2 մլն դրամ, որից մոտավորապես 145 մլրդ 147,2 մլն դրամը իրավաբանական անձանց կողմից ներդրված գումարն է, իսկ 102 մլրդ 851 մլն դրամը ներդրվել է օտարերկրյա քաղաքացիների կողմից: Հայաստանում գործում է ռուսաստանյան կապիտալով 843 իրավաբանական անձ, ինչը կազմում է երկրում գործող օտարերկրյա հիմնադիրներով ձեռնարկությունների

22,30 տոկոսը: Վերջիններիս կողմից կատարվել է 130 մլրդ 524, 6 մլն դրամի ներդրում: Շուրջ 12 մլրդ 344,5 մլն դրամի ներդրում են կատարել ԱՄՆ-ի 495 ձեռնարկություններ և 30 մլրդ 271,7 մլն դրամի՝ Մեծ Բրիտանիայի 86 հիմնադիրներ: Ֆրանսիական 136 հիմնադիրների կողմից Հայաստանի տնտեսության մեջ ներդրվել է շուրջ 13 մլրդ 504,7 մլն դրամ: Հայաստանի հարևան երկրներից իրանցի 865 և վրացի 116 հիմնադիրների կողմից կատարվել է համապատասխանաբար 2 մլրդ 529,6 մլն դրամի և 111,1 մլն դրամի ներդրում: Մյուս երկու հարևաններից թուրք 73 հիմնադիրներ Հայաստանում կատարել են 215,1 մլն դրամի, իսկ ադրբեջանցի 1 հիմնադիր՝ 50 հազար դրամի ներդրումներ:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Հայկ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅ ԱՊԱՏՈՒՄ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑԻՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԱՎԱՇԸ

Ալեքսանդր Մակեդոնացու աշխարհամեծ արշավանքը անցավ Հայաստանի կողքով: Բայց և այնպես եփրատն անցնելիս նա պաշարեց հայկական բերդ: Մակեդոնական բանակը երեք օր շարունակ գրոհ ձեռնարկեց, սակայն ամրոցը մնաց անառիկ: Չորրորդ օրը բերդի աշտարակից հայերը կախեցին ասրափայլ մի լավաշ:

- Հայերը անձնատուր են լինում, - զեկուցեցին զորավարին:
- Ինչպե՞ս, - հարցրեց Ալեքսանդր Մակեդոնացին:
- Նրանք լավաշ են կախել բերդի աշտարակից:
- Լավաշն ի՞նչ բան է:
- Հայկական նրբաթերթ հաց:
- Անձնատուր լինողը սպիտակ դրոշ կկախի և ոչ թե լավաշ: Նրանք հաշտություն ու խաղաղություն են առաջարկում: Հայերն ուզում են ասել, թե մարդն աշխարհ է եկել հաց ուտելու ու ապրելու և ոչ թե զենք վերցնելու ու կռվելու համար:
- Հիմա ի՞նչ անենք, զորապետ:
- Վերացրեք պաշարումը և շարժվեք առաջ: Թող հացապաշտ հայերը վայելեն իրենց հացն ու խաղաղությունը: Հացի դեմ չի կարելի նիզակ ճոճել: Աստվածները յոթ տարի շուտ են մահ պարգևում նրան, ով կռիվ է զնուն հացի դեմ, - ասաց Ալեքսանդր Մակեդոնացին:

ՀԱՄԱՐՈՒՄԻՄ ԵՆ ՀԱՅԸ

Տնորիքի հայերը մի սովորություն ունեն: Վերցնում են զետնին ընկած հացը, թափ տալիս փոշին, համբուրում և դնում մի բարձր տեղ:

Ասում են՝ զետնին ընկած հացը չտեսնելու տվող հայի յոթերորդ պորտն այլևս սերունդ չի ունենում:

ԵՐԳՎՈՒՄ ԵՆ ՀԱՅՈՎ

Քաղաքամայր Արտաշատի արքունի դատարանը հոտնկայս դիմավորում է մեծ դատավոր արքայազն Վրույրին: Վերջինս հագել էր ծիրանի պարեգոտ, զլխին դրել որդան կարմիր գույնի կնճուղ:

Մեծ դատավորը մոտենում է բարձրադիր բազմակամին և հայացքն ուղղում բազմամարդ սրահին:

Քիչ անց զորականների ուղեկցությամբ ներս են բերում հանցավորներին: Հետո սրահի աջ անկյունում շարվում են վկաները: Ամենքն սպասում են: Դատավորը դեռ կանգնած է ոտքի վրա: Ոչ մի ծայն չի լսվում, թվում է, թե սրահում լռության մի դար է մտել:

Վերջապես ներս բերեցին եռոտանին, որի վրա մի թարմ հաց էր դրված: Հանցավորներից մեկը մոտեցավ եռոտանուն, ձեռքը դրեց հացի վրա և ասաց.

- Երգվում են հացով, որ դատարանին կհայտնեն ճշմարտությունը՝ ինչքան էլ այն դառն լինի ինձ համար:
- Նույնը կրկնեցին մյուս հանցավորները:
- Այա եռոտանուն մոտեցավ վկաներից մեկը:
- Այս հացը վկա, ես կասեմ միայն ճշմարտությունը, եթե ստեմ, թող հացը կուրացնի իմ աչքերը, - ասաց նա:
- Նույնն ասացին մյուս վկաները:
- Մեծ դատավորը մտեց բազմակամին և դատավարությունն սկսվեց:

ԾԱՌ ԿՏՐՈՂԻՆ ՄԵԿ ՏԱՐՈՎ ԶՐԿՈՒՄ ԷԻՆ ՀԱՅ ՈՒՏԵԼՈՒՑ

Այրարատ նահանգի Արշարունիք գավառում, Ախուրյան գետի աջ ափին, մի բերդաքաղաք է եղել Բագարան անունով: Մեր թվարկությունից առաջ երկրորդ դարում այս քաղաքի մոտ տնկել են Ծննդոց կոչվող անտառը:

Այդ անտառից թեկուզ մի ծառ կտրողը Երվանդ արքայի հրամանով նետվում էր հանցանաց խուց և այնտեղ մնում մեկ տարի:

Բանտարկյալին տալիս էին զանազան ուտելիքներ և ջուր, բայց ոչ հաց: Մի ամբողջ տարի նա հացի համ չէր առնում և հանցանաց խցից դուրս էր գալիս ուժասպառ դարձած:

- Դա ամենաարդար պատիժն է, - ասում էր Երվանդ արքան, - թող ծառ կտրողն իմանա, որ ծառը բնության համար նույնն է, ինչ մարդու համար հացը:

ՄԱՍԻՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՑՈՐԵՆՆ Է, ՓՈՔՐ ՄԱՍԻՍԸ ԳԱՐԻՆ

Գարու ցողունը կարճ է լինում, ցորենինը երկար: Հին հայ իմաստասերներն այդ միտքն արտահայտում էին պատկերավոր.

- Մասիսը Հայաստանի ցորենն է, Փոքր Մասիսը՝ գարին:
- Մի անգամ նախարարներից մեկը փորձեց փեսայանալ հայոց արքային:
- Ես չգիտեմ դու կարո՞ղ ես իմ դստերն այնպես պահել, որ նա ամեն օր թարմ ցորեն հաց ուտի, - ասաց արքան:
- Նախարարն անմիջապես չպատասխանեց: Նա տուն վերադարձավ, մի պատկերահան վարձեց և ասաց, թե ինչ անել:
- Պատկերահանը կտավի վրա այսպես պատկերեց. արքայադուստրը նստել է ցորենահատիկներից կազմված Մասիսի վրա, իսկ մի ծի գլուխը խոթել է գարու հատիկներից կազմված Փոքր Մասիսի մեջ:
- Եվ նախարարն այդ նկարն ուղարկեց արքային:

ԼԱՎԱՇԸ ԱՄԵՆԱԵՐԿԱՐԱԿՅԱՑ ՀԱՅՆ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ

Մի իշխան երկար ծանապարհ էր կտրել և Հնդկաստանից եկել ու հասել Հայոց քաղաքամայր Դվին: Նա զարմացած շրջում է հայկական շուկայում ու արհեստավորաց տներում: Դվինում շատ բան դուր եկավ նրան: Բայց ամենից շատ նրան հիացրեց լավաշը: Նա չէր պատկերացնում, որ կարող է աշխարհում այսքան բարակ ու այսքան համեղ հաց լինել:

- Մի անգամ հնդիկը զնաց շուկայի փռի տիրոջ մոտ և ասաց.
- Է՛յ, բարեկամ, ձեր այս լավաշը քանի՞ օրվա կյանք ունի:
- Ինչքան պահես կմնա, - պատասխանեց հացթուխը, - թարմությունը պահում է հինգ-վեց ամիս, նույնիսկ մինչև մի տարի:
- Հավատալս չի գալիս:
- Իզուր:
- Լսիր, բարեկամ, վերցրու այս դրամը և հարյուր լավաշ տուր ինձ, ես պիտի փորձեմ քո ասածը: Իմ գործերը վերջացրել են և վաղը պիտի ճամփա ընկնեի դեպի Հնդկաստան: Բայց հենց հիմա որոշեցի, որ Դվինում կմնամ ևս վեց ամիս, մինչև որ համոզվեմ, որ այս լավաշները դիմանում են վեց ամիս և նույն համն ունեն:

- Դա քո գործն է, մնա և համոզվիր, բայց դու կարող էիր ժամանակ չկորցնել և ճամփա ընկնել տուն մի ուղտաբեռ լավաշ գնած: Հնդիկը Դվինում մնաց վեց ամիս և փորձելով իր գնած լավաշների համը՝ համոզվեց, որ հայկական լավաշը ամենաերկարակյաց հացն է աշխարհում:

ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՅԻՎ

Դվինի արքունի սպանդանոցի առջև մի վաճառական գրույցի էր բռնվել իմաստասերի հետ:

- Ինչու՞ եք մորթել տալիս այս հինգ հարյուր ոչխարը, - ասում է վաճառականը:
- Մագաղաթի համար: Միայն կմնա մարդկանց, իսկ մորթիներից խաղախորդները մագաղաթ կպատրաստեն, - պատասխանում է իմաստասերը:
- Եվ այսքան մագաղաթից քանի մատյան կգրվի:
- Մի մեծ գիրք:
- Իսկ արժե՞ գիրք գրել այս հացապակաս տարում: Այսքան մորթիներով կարելի է մի քանի կայք ցորեն գնել:
- Մարդն ապրում է ոչ միայն հացով, - ասաց իմաստասերը, - հացի պակասից մարդու մարմինն է մեռնում, գրքի պակասից՝ հոգին: Հոգու սովն ավելի կործանարար է, քան հացինը:

ՀԱՅԸ ՄԱՐԳՈՒՆ ՃՇՄԱՐՏԱՆՈՍ Է ԳԱՐՉՆՈՒՄ

Հայաստանում տասնմեկերորդ դարում մի իմաստուն մարդ էր ապրում Գրիգոր Պահլավունի Մագիստրոս անունով: Այդպիսի խենթ ու մեծ իմաստասեր հարյուր տարին մի անգամ է ծնվում: Այս իմաստունը սովորություն ուներ որևէ բան գրելու ժամանակ դիմացը մի կտոր հաց դնել և նոր գրիչը շարժել մագաղաթի վրա: Դա նշանն էր, թե նա ամեն ինչ ճիշտ է գրում:

- Հացին նայելուց մարդ յոթնապատիկ ճշմարտախոս է դառնում, - ասում էր իմաստունը:

ՀԱՅԸ ՉԻ ԿԱՐԵԼԻ ԿՈՒՅԵԼ

Շատախի Նավահանդ գյուղում Վարագ անունով մի մարդ էր ապրում: Մի անգամ այս Վարագը ոտով անգուշորեն կոխում է հացի մի կտոր: Ջգալով, որ ինքը ամենրեւի բան է արել՝ ցնցվում է ամբողջ մարմնով և մտնում է, թե ինչպես քափի իր մեղքը: Իր տառապանքի մասին նա ոչ ոքի ոչինչ չի ասում և որոշում է ինքն իրեն պատժել: Յոթ օր գրկում է իրեն հացից և ապրում է միայն ջրով: Ութերորդ օրն ինքն իրեն ասում է.

- Հիմա կարող ես ձեռքդ տանել հացին, բայց եթե մյուս անգամ ոտդ հացի վրա դնես՝ ես քեզ սոված կթողնեմ յոթնասուն օր:

ՀԱՅԱՐԱՇԵ

Սիսիանի շրջանի Անգեղակոթ գյուղում թոնիր վառած ու հաց թխող ընտանիքի փոքր երեխաներից մեկը ձեռքին է գցում լավաշի փրփուր-փրփուր թերթերը և, տնից-տուն անցնելով, շրջում գյուղում:

Փոքրիկը մի-մի լավաշ է նետում երդիկներից, ուր հողի կին կա: Դա նշանակում է, թե թող հացաշատ լինի այն տունը, որտեղ նոր մարդ է լույս աշխարհ գալու:

ՀԱՅՈՎ ԲՈՒԺԵԼ ԵՆ ՀԻՎԱՆԳԻՆ

Բարձր Հայք նահանգի Սպեր գավառի մարդիկ հացով բուժել են հիվանդին: Նրանք մի կտոր հաց են դրել հիվանդի գրպանը, ապա վերցրել և այդ հացը տվել շանը, որպեսզի հիվանդությունն

28

ղարկային համար կինոնկարը: Այն նկարահանել էր Աշո Շահխաթունին և ինքն էլ խաղացել Անդրանիկի և նրա հոր դերերը: Միանգամայն իրավացի է Ա. Բախչինյանը, երբ նշում է, որ «այս կինոնկարը այսօր հետաքրքրություն է ներկայացնում ոչ թե իր գեղարվեստական արժանիքներով, այլ կարևոր է որպես պատմական իրողություն: Սա հայ սփյուռքում ստեղծված առաջին լիամետրաժ շարժանկարն է՝ նկարահանված հայկական թեմայով և հայկական կինոստուդիայում»: Այդ, հայկական «Արմենֆիլմ» ստուդիայում, որը գտնվում էր Սոնմարտի հենց սրտում:

Շահխաթունին, որն անծամբ ճանաչում էր Անդրանիկին, իր առջև շատ դժվարին խնդիր ուներ լուծելու: Հայ ազատագրական պայքարի ցուցադրումը պետք է կատարվեր այնպիսի սյուժեի միջոցով, որը հետաքրքրություն ներկայացնեի նաև օտարազգի հանդիսականի համար: Սա ավելի շուտ սիրային-արկածային ժանրի ֆիլմ է, ուր ներկայացված են Անդրանիկի (հերոսի, որը կրում է զորավարի անունը) և Անահիտի սիրո պատմությունը, Անահիտի առևանգումը քրդերի կողմից և ազատվելը:

Կինոնկարի առաջին ցուցադրումը տեղի է ունեցել 2500-տեղանոց «Սան Պլեյել» սրահում: Ցուցադրությունն ուղեկցվել է երաժշտությամբ, որը կատարել է 30 հոգանոց նվագախումբը: Ընդմիջումներին երաժիշտները նվագել են «Իբրև արծիվ սավառնում ես»՝ զորավարին նվիրված երգը, և «Ի գարմանս Ֆրանսիացիների» դաիլիճի հայությունը ոտքի է կանգնել և կատարել երգը»:

«Ֆիլմը հակասական ազդեցություն է ունեցել հայության վրա, և բավական երկար ժամանակ ազգային կրթեր են բորբոքվել նրա շուրջը: Այն գնվել և ցուցադրվել է մի շարք եվրոպական երկրներում՝ առաջացնելով թուրքերի դժգոհությունը: Եվ, ինչպես միշտ, ԱՄՆ-ը լսել է թուրքերի ձայնը, և «Անդրանիկը» էկրան չի բարձրացել:

Շահխաթունին, ինչպես շատ դերասաններ, ինչ-որ իմաստով

անցնի նրան:

Մի տարի արտերը որոմնաշատ եղան: Մարդիկ հունձ էին անում, բայց չէին կարողանում որոմը զատել ցորենից: Հենց այդ ժամանակ շունն օգնում է մարդուն, ուսում է հացահատիկի մեջ եղած ամբողջ որոմը, մարդուն թողնելով մաքուր ցորենը և լեզու առած ասում. «Ես քո ցավն էլ կուտեմ»:

Մարդը այդ ժամանակվանից աշխատում է իր ցավերի մի մասը շանը տալ՝ հավատալով, որ դա հավատարիմ կենդանու սրտովն է:

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՀԱՄԵՂ ՀԱՅԸ

Ջրաղացպանին հարցրին.

- Ո՞րն է աշխարհի ամենահամեղ հացը:

- Բաղարջը, - պատասխանեց ջրաղացպանը:

ՊԱՆԳԻՏՏՈՒԹՅԱՆ ՄԵԿՆՈՂԻ ԲԱՐՉԻ ՏԱԿ ՀԱՅ ԵՆ ԳՆՈՒՄ

Եփրատի աջ ափին, խոտորնակ-խոտորնակ լեռնալանջերի վրա, յոթ ծունկ է տվել հայրենների ոստան Ակնը: Իր կյանքի բոլոր քսանչորս տարիներն այս քաղաքում անցկացրած Վահրամը վաղը պիտի մեկնեի պանդխտության: Վաղը պիտի Ակնից մի հայրեն պակասեր:

Կինը՝ Վախախը, որ նագենի իրան ուներ ու փխրուն ժպիտ, այդ գիշեր ամուսնու բարձի տակ մի շոթ հաց դրեց և մտովի ասաց.

- Թող իմ Վահրամը պանդխտության մեջ հացի կարող չզգա և քաղցի պատճառով գլուխը չդնի ուրիշ բարձի: Ակնի շոթը թող նրան Ակն վերադարձնի անփորձ ու անվնաս:

ՀԱՅԵՐՆ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՏԱՆ ՀԻՄՆ ԱՐԿԱՆՈՒՄ

Գորիսի շրջանի Տեղ գյուղում որևէ տան հիմն արկանելիս թարմ լավաշի մի խուրձ են դնում հիմնափոսի կողքին և գյուղի յուրաքանչյուր գեղապատանից հրավիրում մեկին: Մարդիկ գալիս են մի կտոր հաց անուշ անում, որից հետո որոմնադիրը դնում է տան հիմնաքարը:

Սովորույթս ցուցանե, թե մարդիկ ցանկանում են, որ այս նոր տունը գյուղի մյուս տների հետ կապված լինի սրբազան հացի ուժով:

դարձավ հնչյունային կինոյի զոհը: Ֆրանսերենին լավ չէր տիրապետում, ուստի ստիպված էր խաղալ փոքր (կամ համր) դերեր: Ռ. Մ.-ը՝ այսինքն Ռուբեն Մամուլյանը, խոստովանել է, որ հաճույքով կնկարահաներ Շահխաթունուն իր ֆիլմերում, եթե նա անգլերեն իմանար: Սակայն նա ի վիճակի չէր հեռանալ կինոյից: Դե-րասանը «մեռած», փոխարենը ծնվեց կինոյի դիմադրաբար, որը շատ արագ դարձավ առաջինը իր նոր մասնագիտության մեջ: 50-ականների սկզբին ֆրանսիական կինոստուդիաներում աշխատող 6 տասնյակ դիմադրաբարներից առնվազն 40-ը եղել են Շահխաթունու աշակերտները:

... Մտնեմուն էր ծերությունը, մահացել էր կինը, հիվանդությունները թույլ չէին տալիս, իր խոսքերով, «գնալ ստուդիաներ, շնչել այն մթնոլորտը, որտեղ ապրել են մշտապես»: Եվ դառնությամբ վկայում է. «Ես մեռնակ եմ իմ հուշերի հետ»: Ավելի ու ավելի հաճախ է նա հիշում Հայաստանը: Դերասան Արման Կոթիկյանին ուղղած նամակում (մահից 2 տարի առաջ), նա գրում է. «... Իմ հիվանդության գլխավոր պատճառը և ջղային դրության քայքայման շարժառիթը այն է, որ ես գրկվել եմ իմ պաշտելի հայրենիքից և երբ լրջորեն մտածում եմ... զգում եմ, որ կյանքումս գործել եմ մի ոճրագործություն. դա այն է, որ թողել եմ հայրենիքս և հեռացել եմ նրա սուրբ հողից»: Սակայն պետք է համաձայնել Շահխաթունուն նվիրված ակնարկի հեղինակի հետ, որը իրավացիորեն գտնում է, թե «ազնիվ արվեստագետը զուր է զոջացել, քանի որ ստալինյան Հայաստանում նրան նույնպես կվիճակվեր նույն տխուր ճակատագիրը, ինչ Ֆրանսիայից եկած արվեստագետներից շատերին...»:

... Ջրոպվար Անդրանիկի դին այժմ հանգչում է Եռաբլուրում: Ո՞վ գիտե, միգուցե կգա այն օրը, երբ զորավարի կերպարը առաջինը մարմնավորողի, Երևանի առաջին պարետի դին նույնպես իր հավերժական հանգիստը կգտնի մայր հողում:



Չեր ուշադրությանն ենք ներկայացնում Շատ Նոր Կյանք գյուղի ակումբի պահակ ԺՅՈՒԼՎԵՆՆ ԶԻՔՈՒԽՆԶՅԱՆԻ հասցեագրված գյուղատնտեսության նախարար ԴԱՎԻԹ ԼՈՔՅԱՆԻՆ: Բարև Դավիթ ջան: Կնե-

րես, որ էպես ուղղակի եմ դիմում, բայց դու հասարակ տղա ես երևում, ինչպես ասում են՝ մեր մարդն ես, և դա շատ լավ երևում է քո արտաքինից ու հագուկապից, էնպես որ՝ ինձ կհասկանաս: Ուղիղ 70 տարի է լրանում էն հիշարժան օրվանից, երբ խորհրդային Միու-

զանովիչը թողեց ամեն ինչ. ընտանիքը, տունը, նույնիսկ կոշկակարի փայլուն կարիերան: Այնինչ ժամանակի հետ կարող էր ունենալ իր կոշկակարական արիեստանոցը: Իսկ նրան ժողովմասարի գործը ձգեց: Բռնկվեց հեղափոխությունը, և Լազարի հոգում մի էնպիսի բան արթնացավ, որ նա, թողնելով ամեն ինչ, ընթացավ առաջ՝ դեպի կոմունիզմի հաղթանակ: Յեղափոխությունից հետո, Դավիթ ջան, առաջին տարիներին զբաղվում էր սովորական բոլշևիկյան աշխատանքով. խարդավանքներ սարքում, մատնում, համախմբում, առաջնորդում իր հետևից, գնդակահարում: Եվ կարողանում էր ամեն էլ ամենը բավական լավ, նույնիսկ ինչ-որ կազմակերպչական տաղանդ դրսևորեց:

րին, դրա համար էլ հենց քեզ եմ ուղարկում, թանկագինս, այդ օգտակար ու պատասխանատու գործին: Կարծում եմ՝ քո ուժը կպատի: Յան էլ, պետք է հեռուն նայել: Շատ-շատ տարիներ հետո, երբ ես ու դու այլևս չենք լինի... - Ստալինը մի պահ դադար տվեց, որի ընթացքում Կազանովիչը մտածեց. «Այդ դու չես լինի, իսկ ես պատրաստվում եմ երկար ապրել», - բայց տեղնուտեղը արգելեց իրեն այդպես մտածել, քանզի ենթադրում էր, որ ժողովուրդների հայրը կարող էր նաև մտքեր կարդալ: - Միա, ուրեմն, - շարունակեց Ստալինը, - շատ-շատ տարիներ հետո, երբ ես ու դու չենք լինի, - նա ուշադիր նայեց Կազանովիչին, և վերջինիս սիրտն ընկավ չոբերը, - դու էլ չես լինի, - ճշտեց Ստալինը, - և երբ

ԻՆՉՊԵՍ ԷԻՆ ԱՆՑԿԱՑՆՈՒՄ ԿՈՒԵԿՏԻՎ ԱՑՈՒՄԸ

թյան ողջ տարածքում սկսեցին կոլեկտիվացում անցկացնել և, բնականաբար, ես պարզապես պարտավոր էի մի կողմ դնել այսօրվա անցուդարձն ու նամակ գրել գյուղատնտեսության նարկոմին, կներես՝ նախարարին: Մանավանդ որ շատերն արդեն չեն էլ իմանում, թե ինչպես էին զարգանում իրարարժույթությունները 1930 թվականի փետրվարի վերջին, ու կոլեկտիվացումը նրանց հիշողության մեջ կապակցվում է միայն Լազար Կազանովիչի անվան հետ: Այնինչ դա չափազանց հետաքրքիր պատմություն է: Մի անգամ, Դավիթ ջան, Ստալինը հանձնարարեց Կազանովիչին կոլեկտիվացում անցկացնել գյուղում: Կազանովիչը դարձրեց ու գնաց եղբոր հետ խորհրդակցելու: Կազանովիչի եղբայրն ասաց. - Լազար, ախր ինչի՞ դ է դա պետք: Դու գյուղատնտեսությունից ոչինչ չես հասկանում, մանավանդ որ ինքը հրեա է, ինչո՞ւ պիտի զբաղվես դրանով էլ ռուսների, ուկրաինացիների, բելառուսների գյուղերում: Ավելի լավ է զբաղվիր մետրոյով. դա գետնի տակ է ու ոչ ոք չի տեսնի, թե ինչ ես էնտեղ անում: Էստեղ, Դավիթ ջան, Լազարը ջղայնացավ ու սկսեց բղավել եղբոր վրա. - Ես հրեա չեմ, էլ դուք բոլորը եք հրեա, իսկ ինձ ուր որ կուսակցությունը ուղարկի, էնտեղացի էլ կլինեմ: Կուղարկի Յայաստան՝ հայ կլինեմ, կուղարկի Ղրղզստան՝ կլինեմ ղղրզ: Նկատի ունեցիր, - ասաց նա եղբորը, - ես քեզանից կիրառարվես: - Լազար, - ասաց եղբայրը, - ախր դու լավ կոշկակար էիր, իսկ իմն պետք է զբաղվես լրիվ ուրիշ գործով: Պատկերացրու, Լազար, եթե Լենինը սապոգ կարեր, մի՞ թե կկարողանար էսպիսի սապոգներ կարել, - և եղբայրը ցույց տվեց Լազարին նրբագեղ սապոգով ոտքը: Լազարն իր ձեռքով հանեց սապոգը եղբոր ոտքից, երկար շոշափեց դա, հոտոտեց ու նույնիսկ ատամով փորձեց: - Լավ սապոգ է, - ասաց նա վերջապես, - ո՞վ է կարել: - Դու, - գոռաց եղբայրը, - դու ես սա կարել դեռ հեղափոխությունից առաջ. ու ես ես սապոգները հպարտությամբ հագնում եմ առ այսօր: Լազար Մոխսեկիչը, Դավիթ ջան, իսկապես կարգին կոշկակար էր: Ու էնքան էր սիրում էլ գործը, որ նույնիսկ ժողովմասար լինելով, միշտ ինքն էր նորոգում իր կոշիկներն ու առաջին անգամ հանդիպած յուրաքանչյուր մարդուն սկսում էր զննել կոշիկներից: Նա երբեք չէր էլ պատրաստվում դառնալ հեղափոխական: Բայց ահա հեղափոխությունը կանչեց նրան իր շարքերը, ու Կա-

թչերն էին կարողանում եղպես հնտորեն հակահարված տալ կամ, ենթադրեմք, կազմակերպել ձերբակալություններն ու գնդակահարությունները: Դե, գուցե, թերևս Ձերժինսկին ու էլի երկու-երեք բոլշևիկներ: Բայց դրանք վատ հեղափոխականներ էին, ժամանակին չհասկացան, թե ում հետևից է պետք գնալ, իսկ Լազարը հասկացավ, նա գնաց միանգամից բոլորի հետևից, մինչև որ վերջապես ընտրեց հավատարիմ լենինյանի հարթած իսկական հեղափոխական ուղին: Եվ ահա, Դավիթ ջան, կանչեց Ստալինը նրան իր մոտ ու ասում է. - Լազար, գիտես, ես հրեատյաց չեմ, բայց հրեաներին, այնուամենայնիվ, չեմ սիրում: - Իսկ դրանց ի՞նչը սիրես, ընկեր Ստալին, - գոռաց Կազանովիչը: - Ես ինքս նրանց տանել չեմ կարողանում: - Սպասիր, - ասաց Ստալինը, - ախր դու, կարծես, ինքը էլ հրեա ես: - Ո՛չ, ընկեր Ստալին, դա այդպես չէ: - Կայց, - ասում է Ստալինը, - հայրդ ո՞վ է: - Յրեա: - Իսկ մա՞յրդ: - Յրեուհի: - Բա դո՞ւ ով ես: - Իսկ ես կոմունիստ եմ, - հպարտությամբ ասաց Կազանովիչը: - Մալադեց, - ասաց Ստալինը, - իսկական ինտերնացիոնալիստ ես: Ու հենց դրա համար էլ, Լազար, թերևս, ուղարկվեց քեզ կոլեկտիվացում անցկացնելու: Էստեղ, Դավիթ ջան, Կազանովիչը լրջորեն վախեցավ. - Ընկեր Ստալին, ախր դա չափազանց մեծ պատիվ կլինի ինձ համար: Չէ՞ որ ավելի արժանավոր մարդիկ կան. Կալինինը՝ նա ժողովրդի ծոցից է, ի վերջո, Բուլոյննին նա ձիերին է էլ լավ ծանոթ: - Չէ, Լազար, դու կգամ կոլեկտիվացում անցկացնելու, և իմնա կբացատրեմ, թե ինչու: Այն բանի համար, Լազար, որ դու, չնայած կոմունիստ ես, բայց այնուամենայնիվ հրեա է: Եթե կոլեկտիվացումը չհաջողվի, ապա մենք հենց այդպես էլ կասենք ժողովրդին, որ դա անցկացնում էր հրեա Կազանովիչը, որը չի սիրում խորհրդային ժողովրդին այն բանի համար, որ նա խորհրդային է: Եվ այդ ժամանակ խորհրդային ժողովուրդն ինքը կորոշի, թե ինչպես վարվի քեզ հետ: Իսկ եթե կոլեկտիվացումն այնուամենայնիվ հաջողվի, ապա բոլորը շնորհակալություն կհայտնեն ինձ, որ իսկական կոլեկտիվ երջանկություն պարզեցի գյուղացիներին: Իսկ ընդհանրապես, անկեղծ ասեմ քեզ, ես գյուղացիներին չեմ սիրում, դրա համար էլ ուզում եմ դարձնել նրանց կուլտուրեսականներ: Ստալինը վառեց ծխամորճը, Դավիթ ջան, ու նրա աչքերի մեջ դեղին ցուլքեր կայծկլտացին: - Չեմ սիրում ես գյուղացիներ

մեր երկրում սատանան գիտե, թե ինչ կըսկըսվի, կիշեն, որ կոլեկտիվացում անցկացնողը հրեա էր և այդժամ... - Ստալինը քծծիծաղեց, ինչը նրա մոտ նշանակում էր վերին աստիճանի ինքնագոհություն: - Որովհետև, ինչպես գիտես, ես հրեաներին չեմ սիրում, չնայած, և դա բոլորին է հայտնի, հրեատյաց երբեք չեմ եղել: - Իհարկե, ընկեր Ստալին, դուք հայտնի ինտերնացիոնալիստ եք և բոլորին սիրում եք հավասարաչափ: - Դու իրավացի ես, Լազար, ես բոլորին հավասարաչափ չեմ սիրում, - ասաց Ստալինը, - բայց հատկապես չեմ սիրում ռուսներին, հրեաներին, հայերին, բելառուսներին, ուկրաինացիներին, ուզբեկներին, դազախներին... Գիտե՞ս, Լազար, դու կծիծաղես, բայց ես վրացիներին էլ չեմ սիրում: Դրանից քիչ պակաս չեմ սիրում եզդիներին, գուցե այն պատճառով, որ կյանքումս երբեք նրանց չեմ տեսել: Դե լավ, գնա՛, անցկացրու կոլեկտիվացումը: Դե, իսկ հետո, Դավիթ ջան, հայտնի է, թե ինչ եղավ: Կազանովիչը գնաց ու սկսեց անցկացնել կոլեկտիվացումը: Նա, իհարկե, էլ գյուղատնտեսությունից ավելի քիչ էր հասկանում, քան ոչխարը՝ ձկնորսությունից, բայց փոխարենը լավ գլուխ էր հանում վախից, սարսափից, ազահուրությունից, մի խոսքով՝ մարդկային հոգեբանությունից: Ու գնա՛ց: Քանի-քանիսին գնդակահարեցին, քանիսին աքսորեցին... Եվ ահա այսօր, Դավիթ ջան, երբ արդեն ողջ չեմ ոչ Ստալինը, ոչ Կազանովիչը, ոչ քիչ ասում, թե Ստալինը կոլեկտիվացում անցկացրեց, կամ էլ թե կուսակցությունը միավորեց բոլորին կուլտուրեսություններում: Չէ՛, գտնվում եմ մարդիկ, և այդպիսիք քիչ չեն, որոնք ասում են. - Ամեն ինչում մեղավոր էր Կազանովիչը: Յենց նա էր այսքարում խորհրդային ժողովրդի դեմ: Եվ ահա մտածում եմ, Դավիթ ջան, այնուամենայնիվ ինչպիսի՞ հիրավի դիվական հնարամտությամբ էր օժտված Ստալինը: Ու իրենից քանի՞ տարի հետո շարունակեց թուսավորել միլիոնավոր մարդկանց գիտակցությունը: Եվ ինչպես քաշեց խեղճ Լազար Մոխսեկիչին, որն իր համոզմունքներով երբեք հրեա չի եղել, այլ միշտ եղել է ազնիվ ու անգիջում կոմունիստ-ինտերնացիոնալիստ: Փրկիր մեզ, Տեր Աստված, դրանցից: Եվ ողորմեա՛: Յավիտյանս հավիտենից: Ամեն:

խորին հարգանքներով՝ Շատ Նոր Կյանք գյուղի ակումբի պահակ ԺՅՈՒԼՎԵՆՆ ԶԻՔՈՒԽՆԶՅԱՆ

ԵՐԱԺԻՇՏՆԵՐԸ ԾԻԾԱՂՈՒՄ ԵՆ

ՆԱԽԱՆՉՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿ

Հենդելի «Ռիմալդո» օպերան հրատարակում է մի ճարպիկ առևտրական: Մի քանի օրվա ընթացքում, բոլոր օրինակներն սպառվում են ու մեծ օգուտ բերում հրատարակչին: Վերջինս մի չմտն գումար է տալիս Հենդելին:

Ստանալով գումարը՝ Հենդելն առևտրականին ասում է.
- Որպեսի մեզնից ոչ մեկը չենդանա, մյուս անգամ դուք գրեցեք օպերա, իսկ ես հրատարակեմ:

ԹԱՆԿ «ԻՆՔՆԱԳԻՐ»

Չեխ կոմպոզիտոր Ֆրանտիշեկ Բենդան շատ բարի մարդ էր: Լսելով, որ իրենց քաղաքն է ժամանել երիտասարդ, ոչ հայտնի և, պարզ է, չքավոր մի կոմպոզիտոր՝ այցի է գնում նրան: Սակայն տանը չգտնելով դռան վրա գրում է. «Պարոն արտիստ, խորապես խնդրում եմ Ձեզ՝ բարեհաճել ինձ մոտ ճաշի»:

Երիտասարդ կոմպոզիտորը թույլ չի տալիս սպասել իրեն: Ծանոթությունը կայանում է: Սակայն, ի գարմանս Բենդայի, հաջորդ օրը երիտասարդ ձախողակը հայտնվում է ճաշի սեղանի շուրջը... Այդպես շարունակվում է երկու շաբաթ, մինչև որ Բենդան նրան մի օր ասում է.

- Ինձ համար չափազանց հաճելի են ձեր մշտական այցելությունները, սակայն ես փոքր-ինչ զարմացած եմ, որ առանց հրավերի շարունակում եք ձեր այցը:

- Դուք պետք է որ ինձ հասկանաք, ողորմած տեր, - առարկում է հյուրը, - ամեն օր, երբ վերադառնում եմ տուն ու դռան վրա կարդում ձեր ազնիվ ձեռքով գրած «ինքնագիրը», չեմ համարձակվում ջնջել այն և պահում եմ իբրև թանկարժեք նվեր. ուստի և չեմ կարող չհայտնվել ձեզ մոտ ճաշի: Նման մեծարգո և պատվավոր անձնավորության հրավերը խեղճ երաժշտիս համար օրենք է:

«ՉԵՉ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ Ե ԶԲԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ»

Մի հարուստ ու ճանաչված մեծատոհմիկ գրում է օպերա և ցույց տալիս Քրիստոֆ Վիլլիբալդ Գյուկին:

- Դե ինչ, պարոն, - ասում է Գյուկը, - ծանոթացա պարտիտուրային, օպերան գրված է հաջող, բայց, որպեսզի կատարյալ լինի, ձեզ պակասում է չքավորությունը:

«ՍԱԿԱՅՆ ԵՍ

ԵՐԲԵՐ ՉԵՒ ՀԱՐՑՆՈՒՄ...»

Մի պատանի Մոցարտին հարցնում է, թե ինչպես սիմֆոնիա գրել:

- Դուք դեռ շատ փոքր եք, ինչու՞ չսկսել բալլադ գրելուց, - պատասխանում է կոմպոզիտորը:

- Բայց չե՞ որ դուք սկսեցիք սիմֆոնիա գրել, երբ դեռ տասը տարեկան էլ չկայիք:

- Այո՛, - պատասխանում է Մոցարտը, - սակայն ես երբեք և ոչ ոքի չէի հարցնում, թե ինչպես գրել:

ՀԱՆՃԱՐԻ

«ՉԱՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ»

Միջակ կոմպոզիտորների մեջ Հայդնից նախանձողներ շատ կային: Նրանցից մեկը որոշում է դաշնակից դարձնել... Մոցարտին: Նա հանձարեղ կոմպոզիտորին հրավիրում է համերգի, ուր կատարվելու էր Հայդնի կվարտետը: Կատարման ժամանակ նա վրդովված դիմում է Մոցարտին.

- Ես երբեք այդպես չէի գրի:
- Ես ևս, - աշխուժությամբ արձագանքում է Մոցարտը, - և գիտե՞ք ինչու. այդ հիստորիան մեղեդիները ոչ ես կարող էի ստեղծել, ոչ էլ՝ դուք:

ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Բեթհովենի երկրպագու գերմանացի մի կոմպոզիտոր, ավարտելով Բեթհովենի «Ֆիդելիո» օպերայի իր դաշնամուրային փոխադրության վերջին էջը, գրում է. «Վերջացրի աստժո օգնությամբ»: Չեռագիրը հասնում է Բեթհովենին. նա որոշ ուղղումներ է անում և վերադարձնում: Նայելով Բեթհովենի ուղղումները՝ փոխադրության հեղինակն իր գրության կողքին նկատում է. «Մահկանացու՛, հույսդ դիր սեփական ուժերիդ վրա»:

ՕՊԵՐԱ ԱՌԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ

Բեթհովենը Դրեզդենում լսում է Պաերի «Լեոնորա» օպերան: Ներկայացումից հետո, երբ Պաերը Բեթհովենին հարցնում է, թե ինչ կարծիքի է իր օպերայի մասին, վերջինս պատասխանում է.

- Ձեր օպերան ես այնքան հավանեցի, որ երկի նրա համար երաժշտություն գրեմ: Եվ Բեթհովենը կատարեց իր խոսքը: Նա այդ նույն նյութի հիման վրա գրեց իր «Ֆիդելիո» օպերան:

ՆՍԱՆԱԿԸ

Ֆրանսուա Բուալդիեն Կոմեդի Ֆրանսեզում ուներ իր մշտական տեղը, սակայն երբեք այնտեղ չէր լինում:

Բայց մի անգամ որոշեց գնալ ներկայացում դիտելու: Երբ նա հսկիչին հայտնեց իր անունը, վերջինս կասկածանքով զննեց նրան և ասաց.

- Ի՞նչ անմիտ կատակ: Մենք շատ լավ ենք ճանաչում կոմպոզիտոր Բուալդիենին, նա ամեն երեկո գալիս է թատրոն, հենց հիմա էլ թատրոնում է:

- Ահա թե ինչ, - պատասխանում է կոմպոզիտորը, - այդ դեպքում ես տոն կզգնեմ, որպեսզի ծանոթանամ Բուալդիենի հետ:

Ներկայացման ընդմիջմանը Բուալդիեն դիմում է ինքնակոչին.

- Ուրեմն դուք կոմպոզիտոր Բուալդիեն՞ն եք, - ասում է նա, - պիտի խոստովանեմ, դա ինձ մի փոքր զարմացնում է, որովհետև արդեն հիսուն տարի է, ինչ թվում է, թե Բուալդիեն ես եմ:

«Горцарар»

Издается с июля 1999г.

**АВТОР ПРОЕКТА-
ВАГРАМ БЕКЧЯН**

Зам. гл. редактора -
Роза ГУЛЯН

Գլխ. խմբագրի տեղակալ՝
Ռոզա ՂՈՒԼՅԱՆ

ИЗДАТЕЛЬ

Издательский Дом

«ШАГАНЭ»

Лицензия серия ИД № 02313

Журнал зарегистрирован
в Министерстве Российской Федерации
по делам печати, телерадиовещания
и средств массовых коммуникаций
**Регистрационный номер
ПИ № 77-5015**

Авторские материалы
не рецензируются и не возвращаются.
Перепику с читателями редакция
не ведет. Мнение авторов может
не совпадать с мнением редакции.

Материалы со знаком **♀** публикуются
на правах рекламы.

Редакция не несет ответственности
за содержание рекламных объявлений.

ПЕРИОДИЧНОСТЬ ВЫХОДА -

Отпечатано

ОАО «Калужская типография стандартов»
Формат А3, объём 4,5 п.л.
тираж 1500 экз. Зак. № 383

Территория распространения:
Российская Федерация, страны СНГ,
зарубежные страны.

В номере использованы материалы
«АЗГ», «АРАВОТ», «ГА», «ЕТЕР»,
«hАЙКАКАН ЖАМАНАК», «ИРАВУНК»,
«ЧИ», «НОВОЕ ВРЕМЯ», «ВОЗНИ».

Цена свободная.

248001, г. Калуга,
ул. Суворова, 160.

тел.: (0842)-56-59-29,

E-Mail: gortsarar@kaluga.ru

факс: (0842) 565-929,

www.gortsarar.ru



E-Mail: bshahanev@kaluga.ru